ՀԱՄԼՈՒՍԱՇԽԻ ՅԵՐՐՈՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. ԱԲՈԼԻՆ

ՊԱՅՔԱՐԵՆՔ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

37
Ա-15

9 3 0

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՍԱԾԻԻ ԿԵՆՏՎԱՐՀՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ

MAR 2010

01 2013

ՀԱՄԷՈՒՍԱՇԽԻ ՅԵՐՐՈՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ

37
Ա-15

Ա. ԱԲՈԼԻՆ

ՊԱՅՔԱՐԵՆՔ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Թարգ. ՍՏ. ԹՈՓՉՅԱՆ

1 9 3 0

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՍԱՉԽԻ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅԳՈՒԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 5159 (Բ.)
ՊԱՏՎԵՐ 2540 ՏԻՐԱԺ 1000

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արա. ССР
Ա. Մասիսյանի անվան
24220-59

ՆԱԽԱԲԱՆ

Համլուսաշխի յերրորդ պլենումը զարգացրել, խորացրել ու կոնկրետացրել է միությունական աշխատանքի այն հիմնական ու նոր խնդիրները և աշխատանքի նոր մեթոդները, վորոնք բղխում են կուլտուրական հեղափոխության և սոցիալիստական լայն արշավի մարտական տեմպերից: Մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման այս աննախընթաց շրջանում, Համլուսաշխի յերրորդ պլենումի վորոշմամբ, միությունական ամենափոքր ողակն անգամ պատասխանատու է դառնում պրոֆաշխատանքների մեջ կոմկուսակցության հիմնական գծի նիշտ կիրառման գործում. ուրեմն թե յուրաքանչյուր պրոֆաշխատողի և պրոֆակտիվի համար, ավելին, պրոֆմիության յուրաքանչյուր անդամի համար կենսական անհրաժեշտություն է դառնում խորապես ուսումնասիրել Համլուսաշխի յերրորդ պլենումի վորոշումները:

Նկատի առնելով այդ վորոշումների քաղաքական խոշոր նշանակությունը Լուսաշխի Հայաստանի կենտվարչությունն ահա հրատարակում է պլենումին նվիրված սերիայի առաջին գրքույկը:

Գրքույկում քննվում է այն հարցը, թե ինչ մասնակցություն պետք է ունենան լուսաշխ միությունն ու լուսաշխատավորները գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում: Յեթե հաշվի առնենք, վոր մեր միության անդամների խոշորագույն տոկոսը աշխատում է գյուղում և ակտիվ մասնակցություն ունի գյուղի հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, ապա պարզ կլինի, թե ինչ խոշոր ոգնություն է նրա համար այս գրքույկը. սա, ի հարկե, չի նշանակում թե հանձնարարվող գրքույկը հրատարակվում է բացառապես գյուղլուսաշխատավորների համար. վերջին ժամանակներս քաղաքի լուսաշխատավորները, իրոք վոր, իրենց հասարակական աշխատանքներում խոշոր տեղ են տվել գյուղաշխատանքներին. այս գրքույկը հարուստ նյութ է տալիս գյուղաշխատանքի համար նաև քաղաքի լուսաշխատավորներին:

Համլուսաշխի պլենումին նվիրված գրքույկների այս սերիան սակ

ընթերցանության համար չի հրատարակվում: Հարկավոր է պրոֆակտիվից կազմակերպել հատուկ գրուպաներ, որոնք մանրազնին պետք է ուսումնասիրեն հրատարակվող գրքույկների նյութը, նրա հիման վրա աշխատանքի կոնկրետ առաջադրություններ անեն իրենց հետ անմիջապես շփվող պրոֆմարմիններին և ոժանդակեն նրանց այդ առաջադրությունները կատարելու համար:

Այս աշխատանքը պետք է մտնի կոլեկտիվների սոցմրցման պայմանագրերում: Ղեկավարող լոզունգը պետք է լինի—ոչ մի պրոֆանդամ, որ ծանոթ չլինի Համլուսաշխի յերրորդ պլենումի որոշումներին:

Բացի այդ, հրատարակվող գրքույկները պետք է ոգտագործել կազմակերպված և կազմակերպվելիք պրոֆխմբակների, պրոֆդպրոցների և պրոֆդասընթացների համար, որպես համապատասխան խնդիրները լուսաբանող ձեռնարկներ:

ԼՈՒՍԱՇԽԻ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱՂԼՈՒՍՍԵԿՏՈՐ

20 ապրիլի, 1930 թ. Յերևան.

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԸ ՅԵՎ ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ ՎՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳ

Մեր սոցիալիստական արշավի խոշոր հաջողությունները գյուղի կապիտալիստական տարրերի վրա, մանր, փոշեցած գյուղացիական տնտեսությունների փոխադրումը խոշոր սոցիալիստական արտադրական յելևների վրա, լավագույն ապացույցներն են կուսակցության և բանվոր դասակարգի տարած հաղթանակի: Յեթե տարի ու կես առաջ մի քանի գյուղերի կոլխոզացումը թվում եր չափազանց արմատական, դժվար իր ազդեցության լոզունգ, մի լոզունգ, որն անգամ որոշ բոլշեվիկների մեջ կասկածանք եր առաջ բերում, սակայն այսոր ամբողջական շրջանների և դավառների կոլեկտիվացման փաստն արդեն պարզ գիտակցություն և պահանջում: Չկան այլևս կասկածանքներ, որ 1932 թ. մեր յերկրի հոդագործական հիմնական ռայոններում արդեն կավարտվեն կոլեկտիվացման աշխատանքները:

Մենք գտնվում ենք պատմական մեծ բեկման շրջանում, յերբ խոշոր հանրայնացված տնտեսությունները—կոլխոզները, սովխոզներն ամբողջ գյուղատնտեսության մեջ հանդիսանում են որպես վճռող ֆակտորներ: Այս հանգամանքը ստեղծում է ամուր տնտեսական հիմքեր իրագործելու՝ կուլակությունը որպես դասակարգ վոչնչացնելու լոզունգը: Այս յերևույթը խոշոր շրջադարձ է մեր քաղաքականության մեջ: Բայց որպեսզի կապիտալիզմի արմատները մեր յերկրից արմատախիլ անենք, պետք է միաժամանակ տանենք վճռական պայքար կուսակցության դեմ ուղղված դեմ չեղվող բոլոր ոպորտյունիստական թեքումների և լիբերալ բուրժուական տեսությունների դեմ:

Յես այստեղ, անգամ թռուցիկ կերպով, չեմ կարող տալ բուրժուալիբերալ տեսությունների վերլուծությունները, կուսակցության գլխավոր գծից կատարված թեքումները, որոնց հետ մենք պետք է մղենք անհաշտ պայքար, մեր աշխատանքների ընթացքում դպրոցներում, ՎՈՒԶ-երում, կուլտ-լուս հիմնարկներում և մեր հասարակական քաղաքական աշխատանքների մեջ:

Ընկ. Ստալինը դյուղատնտես-մարքսիստների կոնֆերանսում իր յելույթի մեջ մանրամասն վերլուծեց այդ տեսությունների հիմնականները: Սոցիալիստական և կապիտալիստական սեկտորների «հավասարա-

կչության» թեորիան, գյուղի սոցիալիստական վերակառուցման «ինքնահոսության» տեսությունը, մանր բուրժուական տնտեսությունների «կայունության» տեսությունը, մի տեսություն, որի նպատակը, ըստ էության կապիտալիստական կարգերի պաշտպանությունն է: Գրոմանի տարորինակ տեսությունը, ինչպես ընկ. Ստալինն է անվանում, ըստ Գրոմանի վերաբերության հեղափոխությունը գյուղացիության ավելի շատ բան տվեց, իսկ Հոկտեմբերյան հեղափոխությունը ավեց վոչինչ: Այս տեսությունը փորձում է վարկաբեկել կոլխոզները. այս տեսությունը չի նկատում մեր տնտեսության սոցիալիստական ձևերից մեկը, դասակարգային պայքարի տարբերությունը կոլխոզից դուրս և դասակարգային պայքարի տարրերը կոլխոզների ներսում:

Մեզ, լուսաչխատավորներիս հարկավոր է հասկանալ մեր յերկրի դասակարգային առաջընթացը և այն չրջադարձը մեր ամբողջ քաղաքականության մեջ, որը ներկայումս ընդգծել է մեր կուսակցության կենտկոմը:

Գյուղում մենք հանդիսանում ենք կուսակցության ազիտպրոպը և պարտավոր ենք լինել կուլտուրական և ազրիկուլտուր ձեռնարկումների ինիցիատորները: Մեր կուլտուրական աշխատանքներն ընդհանուր վոչինչ չունեն լիբերալ կուլտուրականության հետ. կուլտուրականությունը մեզ մոտ դասակարգային պայքարի ձևերից մեկն է: Մենք պետք է պարզ ըմբռնենք կուսակցության քաղաքականության չրջադարձը— պետք է կարողանանք տալ հակահարված բոլոր հակամարքսիստական տեսություններին, որոնք ազատում են շատ ու շատ մարդկանց գլուխները: Գյուղի սոցիալիստական, լայնածավալ վերակառուցումը պատմական նոր ետապում է չահագործող կուլակների դասակարգի լիկվիդացիան գյուղի խնդիրների լուծումը դնում է նոր ձևով, վոչ միայն անմիջականորեն քաղաքականության հետ կապված, այլ և ժողովրդաբության, առողջապահության և այլ բնագավառների հետ:

Նչելով միության տարվելիք խնդիրները գյուղում, մենք յելակետ պետք է ունենանք կոլխոզաշինության գրությունը, նրա պահանջները, պետք է հաշվի առնենք և ընդհանուր և տեղական գյուղատնտեսության արտադրության կոլեկտիվացման հեռանկարները: Ցնելով միմիայն այդ հեռանկարներից, մենք կկարողանանք ճիշտ կազմակերպել մեր աշխատանքները գյուղում:

ՄԵՐ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Բոլորը լավ տեղյակ են այն վճռական պայքարին, որը դեռ ևս անցյալ տարի կուսակցությունը և պրոֆմիությունների վերակազմված

ղեկավարությունը տանում եյին աջ ոպորտունիստների դեմ: Մեկը, հիմնական կետերից, որի համար կուսակցությունը և վերակազմված պրոֆեսիոնալ ղեկավարությունը խփում եյին ոպորտունիստներին, դա գյուղում տարվելիք մեր աշխատանքների նշանակության թերագնահատումն եր և գյուղում բանվոր դասակարգի ղեկավարության դերի թերագնահատումը, որի մեջ ընկել եր պրոֆեսիոնալ հին ղեկավարությունը:

Այժմ, կարծեմ չկա վոչ մի ղեկավար պրոֆեսիոնալ աշխատավոր, որը փորձեր ապացուցել, որ պրոֆմիությունները գյուղում անելիք չունեն: Այդպիսի պրոֆաշխատավոր թերևս ճրագով եյ չգտնես: Բայց նշանակո՞ւմ է դա, որ պրոֆմիություններն իսկապես իրենց բոլոր աշխատանքները վերակառուցել են գյուղի սոցիալիստական վերակառուցման իմաստով և գյուղի լիակատար կարիքները հաշվի առնելով, որ հետևողական կերպով և լրիվ կերառվում են գյուղի և քաղաքի զուգման նոր ձևերը, որ պրոֆմիությունները բավականաչափ յեռանդուն աշխատում են արտադրական զուգման ամրացման գործում: Ցեռ կարծում եմ, որ դա դեռևս չկա, որ ոպորտյունիզմի դեմ սկսված պայքարը, պրոֆմիությունների աշխատանքների մեջ պետք է վոչ պակաս յեռանդով շարունակել, վճռարար վերջ տալով աջ թեքման պրակտիկային, գյուղում պրոֆմիությունների տարվելիք աշխատանքների թերագնահատման իմաստով: Մեր պրոֆմիությունները կատարում են վճռական չրջադարձ, կանգնելով՝ յերեսներով դեպի գյուղական աշխատանքները: 25·000 բանվոր կամավորների մոբիլիզացիան գյուղի համար, գյուղում աշխատանքներ տանելու համար բրիգադների ուղարկումը, գյուղատնտեսական բանվորության և սեզոնիկ կատուցողների բեռ ոժանդակությունը, պրոֆմիությունների միջոցներով կատուցվող ՄՏԿ (մեքենա-տրակտորային կայաններ) և այլն: Գյուղում տարվելիք մեր միության աշխատանքները ձևակերպվել են վոչ միայն մեկ անգամ, նրանք ձևակերպվել են կուսկենտկոմի վորոշումների մեջ, ՀԱՄԿԿ-ի վորոշումների մեջ, մեր համագումարի և 2-րդ պլենումի վորոշումների մեջ:

Ցեռ միայն հիշեցնում եմ, որ հիմնականում այդ խնդիրները հանդում են նրան, որպեսզի լուսաչխատավորներից դաստիարակել սոցիալիստական գյուղի վերակառուցման աշխատանքների ակտիվ մասնակցողներ, կոլեկտիվացման դաշտարների և կոոպերացիայի պրոպագանդիստներ, գյուղի կուլտուրական և ազրո կուլտուր ձեռնարկումների ինիցիատորներ, գյուղատնտեսական բանվորների և կատուցող միության ոգնականները՝ բատրակների և սեզոնիկների գյուղատնտեսական անգրագիտության վերացնողներ և նրանց կուլտուրական կարիքները ոպասարկողներ և այլն:

ՀամկԿ-ն հայտարարեց, վոր մեր միությունը պետք է լինի գյուղում կուլտարշավ կազմակերպողը և ինքնիշատորը, ուժեղացնի իր մասնակցությունը գյուղ. և շրջխորհրդների, նրանց սեկտորների աշխատանքներին, գյուղի համար բանվոր դասակարգից պատրաստի գյուղական ինտելիգենցիայի նոր կադրեր, հատուկ ուշադրություն դարձնի բատրակության և չքավորության յերեխաների ուսման վրա, բացառիկ ուշադրությամբ մասնակցի բանվոր դասակարգի կարեվորագույն խնդիրներին—կոլխոզշարժմանը, վորպեսզի կուսակցության ղեկավարությամբ բատրակ-չքավորության և դաշն կապելով գյուղացիության հիմնական մասսաների, միջակության հետ՝ կուլակությանը վոչնչացնի վորպես դասակարգ:

Համլուսաշխի կենտկոմի նախագահությունը, 2-րդ պլենումից հետո, ավել է մի շարք կոնկրետ ցուցմունքներ գյուղում տարվելիք մեր միության աշխատանքների մասին: Մենք Կոլխոզկենտրոնի հետ բաց ենք թողել մի նամակ՝ կոլխոզներում լուսաշխատավորների դերի և կուլտուրական խնդիրների մասին: Մենք կնքել ենք գլխավոր համաձայնագիր գյուղատնտեսական բանվորների կենտկոմի հետ, պայմանագիր դասակարգային պայքարի ֆրոնտում—գյուղում միասնական, սոցիալիստական յելույթ կատարելու համար: Կառուցողների միության հետ միասնաբար կոնկրետիզացիայի յենք յենթարկել սեղոնիկների մեջ տարվելիք աշխատանքները, ավել ենք մի շարք ցուցմունքներ գյուղում անցկացնելու մասսայական կամպանիաներ և վերակառուցել մեր միության գյուղական աշխատանքները:

Ցեթե մենք գյուղում տարված մեր միության աշխատանքները բերենք ընդհանուր հանրագումարի, կարելի կլինի հայտարարել, վոր լուսաշխատավորների ստորին մասսաների գործնական աշխատանքներում—կուլտարշավում, ագրոարշավում, կոլեկտիվացման, հացամթերման, զարնանացանի կամպանիայում, փոխառության տարածմանը, գյուղում մի շարք հիմնական քաղաքական կամպանիաների անցկացման խնդիրներում ունեցել են մեծ նվաճումներ:

Նիժնայա Վոլգայում, Հյուսիսային Կովկասում վերջին ժամանակներս նաև Միջին Վոլգայի և մի շարք այլ միութենական կազմակերպություններ արդեն նկատելի կերպով յերեսներով դարձել են դեպի գյուղը և դպալի չափով ուժեղացրել են իրենց ղեկավարությունը: Բայց դարձյալ չի կարելի ասել, վոր գյուղի լուսաշխատավորների ոգնության գործը և այդ աշխատանքների ղեկավարությունը դրված է արդեն բավականաչափ սկզբունքա-քաղաքական բարձրության աստիճանի վրա:

Ոպորտյունիզմի տարրերը դեռ կենդանի են մեր միութենական կազմակերպությունների գործնական աշխատանքների մեջ.

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՊԱՅՔԱՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԵՄ

Ցեռ կցանկանայի այստեղ համառոտակի վերլուծել մի քանի մոմենտներ, վորտեղ ոպորտյունիզմը մեր կազմակերպությունների գործնական աշխատանքներում ավելի պարզորոշ է հանդես գալիս. սա անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի ավելի վճռական հարված կարողանք տալ նրան:

Առաջինը՝ դա գյուղական աշխատանքների թերագնահատումն է: Գյուղի վերակառուցման խնդիրները մենք գնում ենք, վորպես մեր ամբողջ միության խնդիր և բնավ միայն գյուղական կազմակերպությունների: Այս դրությունը սկզբունքորեն գիտակցվել է քաղաքի լաստ տեղկոմների կողմից: Մենք ունենք քաղաքի լուսաշխատավորներ և քաղաքի տեղկոմների դրական աշխատանքների բազմաթիվ օրինակներ և նրանց մասնակցությունը գյուղի տնտեսության վերակառուցմանը:

Հատկապես արժեքավոր են ագրոարշավների փորձը, կազմակերպված Խարկովի և Սարատովի գյուղատնտեսական ինստիտուտների կողմից:

Վարոնեժի № 4 խմբկոմը կազմակերպել է «Կրասնիյ Վային» կոլխոզը. № 16 խմբկոմը կազմակերպել է մի քանի մեկնումներ դեպի կոլխոզները, ուղարկել են այնտեղ բրիգադներ, վորոնք տարել են իրենց հետ տրակտորներ: Բոբրույսկի լուսաշխատավորները մյուս չեֆական կազմակերպությունների հետ միասին ստեղծել են մեկ կոլխոզ՝ 32 տնտեսություններից բաղկացած և տվել են այնտեղ աշխատանքներ տալու համար՝ հատուկ լուսաշխատավորներ:

Տամբովի № 10-րդ տեղկոմը կոլխոզին հանձնել է 2 գութան և անցել գյուղատնտեսական դասընթացքների կազմակերպմանը:

Բավականի մեծ և կենդանի աշխատանք, գործնական ոժանդակություն են ցույց տալիս մեր մանկավարժական տեխնիկումները—որպես՝ Պսկովի, Ուֆիմի և Բիլեբեվի:

Մի քանի դպրոցներ և խմբկոմներ (Վյատկայի տեղկոմ № 5, Պենզենսկի տեղկոմ № 20 և այլն) աջակցել են ագրոմինիմումի անցկացմանը: Պենզենսկի լուսաշխատավորներն իրենց յենթաչեֆ Ալֆիրովկա գյուղում կազմակերպել են անկյուն վնասատուների դեմ պայքարելու համար, կարգավորել են անկարանը, մտցրել նոր կուլտուրաներ և այլն:

Կարելի է մատնանշել մի շարք օրինակներ, երբ դպրոցը, մանկատեխնիկումը կազմակերպել են գյուղատնտեսական դասընթացքներ՝ վերապատրաստելու համար բատրակներին և չքավորներին, կազմակերպել գյուղատնտեսական մեքենաների վարձակալական պունկտեր (Պոկրովի մանկավարժական տեխնիկում) և այլն: Կազմակերպում են գյուղատնտեսական մեքենաների վերանորոգումները, դրսևորում են մարդկանց, որոնք յենթակա չեն անհատական հարկադրման, կազմակերպում են կարմիր սայլեր, բրիգադներ կուլտուրական սպասարկման համար (Իվանովո–Վոզնեսենսկու շրջան և այլն):

Դրական աշխատանքների օրինակները բազմաթիվ են—դեռ պրանք չեմ թվի: Բայց պետք է այստեղ ընդգծել և բացերի մասին, որոնք մեզ մոտ դեռ շատ են: Կան դեռ շատ տեղկոմներ և շատ միութենական կազմակերպություններ, որոնք բոլորովին մասնակցություն ցույց չեն տալիս գյուղում կատարվող աշխատանքներին, սահմանափակվում են ագրոտեխնիկական, կուլտուրական ձեռնարկումներով, չապահովելով այդ աշխատանքների մեջ դասակարգային գիծը:

Քաղաքի լուսաշխատավորների աշխատանքները գյուղատնտեսության վերակառուցման մեջ, չնայելով իր քանակական աճման, չի ընդունել պլանային և սիստեմատիկ բնույթ և մեծ մասամբ անցկացվում պատահական կերպով:

Քաղաքի տեղկոմի ոժանդակության չափը չի համապատասխանում նրանց նյութական և մարդկային ռեսուրսներին (միջոցներին):

Ձեռնարկումները, որոնք արվում են ագրոպրոպագանդայի և բերքատվության ծավալման և բարձրացման համար, շատ հաճախ չեչոր չի դրվում գյուղատնտեսության կոլեկտիվացման հարցերի վրա:

Մեր նյութերի մեջ չկան, կամ համարյա թե չկան տվյալներ քաղաքի լուսաշխատավորական կազմակերպությունների և չքավորական կազմակերպությունների միջև գոյություն ունեցող կապի կամ այլ ձևերի մասին, դա որքան էլ տարորինակ չթվա, շեֆական աշխատանքների մեջ, քաղաքի շատ կազմակերպություններ գյուղում միանգամայն անհրաժեշտ չեն համարել ոգնելու գյուղի լուսաշխատավորներին: Քաղաքի կազմակերպությունները գյուղում աշխատանքները տանում են մեկուսացրած համապատասխան կոնտակտ չստեղծելով գյուղի լուսաշխատավորի հետ: Վերջին ժամանակները այդ աշխատանքները աշխուժանում են բրիգադների այցելումներով և սոցիալիստական մրցման պայմանագրերի կնքումով:

Վորպես կանոն գյուղական շրջաններում կուլտուրականն շինարարության մեջ բացակայում է սոցմրցման աշխատանքների խորացումը: Բատրակների և չքավորների պատրաստման գործի համար տրամադրվում են տեխնիկումները, ԴՑԵԴ, իսկ մասսայական դպրոցների կոլեկտիվները այդպիսի աշխատանքներ չեն տանում: «Ցերեսներով դեպի գյուղ» շրջադարձը մեր կազմակերպությունների մեջ ընդհանրապես թույլ է: Բայց էլ ավելի թույլ են այդ աշխատանքները բարձրագույն կրթական հիմնարկների և գիտական հետազոտական ինստիտուտների կոլեկտիվների գծով: Այս տեղերում մենք դեռևս ստատիստիկ տվյալներ չունենք առաջին անհամարձակ քայլերը: Քաղաքի կոլեկտիվների մեծամասնության աշխատանքների թուլությունը մենք չենք կարող բացատրել այն փաստով, որ նրանք մի քանի լավագույն կոլեկտիվներ: Դա կնշանակի առաջամարտիկների թիկունքի հետևում ծածկել, թաղցնել ոպորտունիստներին (համաձայնողականներին):

Այսպիսով աջ ոպորտունիստների դեմ մղվող պայքարի մեջ միության անելիքների մեկն էլ մնում է՝ պայքարել միության գյուղական աշխատանքների թերագնահատման նշանակության դեմ գյուղի ներկա շինարարության շրջանում:

ՍՈՎՈՐԻՐ ՃԱՆԱՉԵԼ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒՆ ԿՐԱԿ ՎՆԱՍԱՐԱՐՆԵՐԻ ՎՐԱ.

Ցերկրորդ—ինչի դեմ պետք է վճռականորեն կրակ բացել—դա միության շարքերում քաղաքական շերտավորում անցկացնելու թերագնահատումն է. ներկա եռապում դա հանդիսանում է հատուկ վտանգ, երբ կուսակցությունը զնում է շահագործող դասակարգի լիակատար վոչնչացման խնդիրը:

Պետք է կարողություն ունենալ տեսնելու դասակարգային թշնամուն և նրա գործակալին դպրոցում, բարձրագույն դպրոցներում, միության մեջ և պետք է կարողանալ նրանց դեմ պայքարել:

Ցեռ վաղուց չէ, որ Մոսկվայում, պրոլետարական շրջանի Լուսաշխի Տանը պրոֆակտիվիստների հետ ունեցա դրույց:

Ինձ թվում էր, որ խոսել քաղաքական դիֆերենցիացիայի մասին—այդ կնշանակի կրկնել այբուբենական ճշմարտությունները, բայց երբ ես հարց դրեցի, որ տեղկոմների առաջիկա ընտրություններին պետք է դրսևորել անհարազատներին, «ճահիճը», չճնշվել մարդկանց իրենց ազդանունով անվանելու, մատնանշել նրանց բացերը աշխատանքների մեջ, տվյալ դպրոցի պայմաններում, անել քաղաքական և կազմակերպչական յեզրակացություններ տեղական աշխատանքների

պրակտիկայից, շատերի համար այդ բանը յերևաց նորություն: Սկսվեցին խոսակցություններ այն մասին, թե անհրաժեշտ է արդյոք այդ անելու պրոֆեսիոնալ կոլեկտիվներին, վոր լավ չեր լինի այդ աշխատանքները հանձնարարվեր կոմբջիջներին և այլն:

Քաղաքական դիֆերենցիացիայի մասին խոսակցություններ են ունենում և տեղկոմները և միության անդամները, բայց գործնական քաղաքական ղեկավարություն այդ պրոցեսներում, լուսաչխատավորների շրջանում, անդամ մի այնպիսի առաջավոր շրջան, վորպիսին է Մոսկվայի պրոլետարական շրջանը, դեռևս չի անցել նման աշխատանքների:

Միութենական միտինգի կապակցությամբ, «Ուչիտելսկայա գազետայի» էջերում մենք ստացանք բազմաթիվ նամակների մի ամբողջ շարան:

Գրում էին «խնդրում են բացել շիֆրը, ինչ ասել է անհարապատասարը» (ծիծաղ): Մենք ստացել ենք նամակներ, վորտեղ ասվում է «տվեք խնդրեմ հրահանգներ այն մասին, ինչպես անցկացնել ինքնատարումը»: Ընկերները չեն հասկացել անգամ այն, վոր դասակարգային պայքարը չի կարելի կարգավորել հրահանգներով, վոր պետք է կարողանալ ճանաչել դասակարգային թշնամուն: Այստեղ հրահանգները չեն ազդի: Համլուսաչիի Կենտկոմի տեղեկատուներում, տեղերի նյութերի և նամակների մեջ և լրագրերում վերջին ժամանակները ավելի շատ և շատ, ավելի հաճախ և հաճախ դրսևորվում են կուլտուրական ֆրոնտում առանձին անհատների վնասարարության փաստեր: Սեվծովյան շրջանում, Տուապսեյում մի ուսուցչուհի հայտարարել է, վոր գյուղում չքավորներ չկան, վոր չքավորները—դրանք հանցագործները, հարբեցողները և գողերն են: Գերմանական Բժիտ գյուղում, Տուապսեյի շրջանում ուսուցիչը ժողովներում բացարձակ յելույթ ունեցավ կուլակներին պաշտպանելու համար, ասելով, վոր իր յելույթը հալածվածների համար է: Այս ուսուցիչը գրում է արտասահման, վոր սովում է և այնտեղից ստանում է ծանրոց, վորի մեջ կան բուրլիկներ, մի կիլո շաքար և մի քառորդական թեյ: Նա պետք է վճարեր մաքսագին ավելի քան նրանց արժեքը, բայց նա դրա մասին հայտարարում է,—«թող ավել արժենա դա, բայց չէ վոր դա արտասահմանից է»: Սոչիի շրջանում ուսուցիչը հավաքում է կուլակներին և նրանց համար գրում է միջնորդություններ, նրանց հարկերը վերացնելու համար: Դոնեցքի զավառում յերևան են հանված ուսուցչության աշխատանքների մի քանի դեպքեր կուլակության հետ: Մի ուսուցիչ ուղղակի ասել է դյուղացիներին, «ասացեք, վոր հաց չկա և հարցը վերջացած է»: Մի ուսուցիչ սիստեմատիկորեն հարբեցողությամբ է պարապել կուլակ-ձայնատուներների հետ: Հյուսիսային Ոսեթիայում ուսուցչությունը հարց է դրած յեղել այն մասին, վոր կուլակներին չպետք է ճնշել, վորովհետև կուլակը լավագույն տնտեսատերն է: Այդ ուսուցիչների տնատերերի մոտ բացված է յեղել ահագին քանակությամբ հացի ավելցուկ: Մի քանի ուսուցիչներ Ոսեթիայի արտակարգ համագումարում հայտնել են, վոր աշխատանքային դպրոցի հիմնադիրները յեղել են Ռուսսոն և սիոնոդի որեր պրոկուրոր Պոբեդանոսցևը: Այսպիսիներից շատերը փառավորապես դպրոցում տանում են աշխատանքներ, վորովհետև միությունից ընկերները չեն տեսնում դասակարգային պայքարը:

ՄԵՐԿԱՑՆԵԼ «ԶԵԶՈՔՆԵՐԻՆ» ՅԵՐԿՅԵՐԵՍԱՆԻՆԵՐԻՆ ՅԵՎ ԶԴԻՄԱԴՐՈՂՆԵՐԻՆ

Հայտնի է Զեխովյան տիպը—«մարդը ֆուտլյարի մեջ»: Ժամանակակից լեզվով այդպիսիները կոչվում են «չեզոք» մարդիկ: Սրանք են, վորոնք վոչինչ չեն տեսնում, վոչինչ իմանալ չեն ցանկանում բացի մեր դպրոցներում իրենց պարտականությունների վատ կատարումը: Այս մարդիկ իհարկե չեն աջակցի կուլակի վոչնչացմանը, վորպես դասակարգի, այս մարդկանց հետ մեր ճանապարհը մեկ չի և սրանց համար հարցը պետք է դնել պարզ-կամ ազատագրվեցեք պատանից, կամ դպրոցը ազատեցեք ձեզնից:

Հաճախակի հանդիպում են յերկյերեսանիների: Լենինգրադցիները իրավացի յեն, յերբ սրանց վրա սրում են իրենց ուշադրությունը: Յերկյերեսանիները նրանք են, ովքեր մեր գործին չեն հավատում, վորոնք իրենց հոգու խորքում դեմ են մեզ, բայց արտաքուստ, ի ցույց անցնելիկացնում մեր դիրեկտիվները: Ինչպես են նրանք այդ անցկացնում, դա յել այլ խնդիր է: Բապտիստների կենտրոնական խորհրդի կողմից տրված նամակներից մեկի մեջ, իրենց համայնքների յերկյերեսանիներին, տրվում է հրահանգ-դպրոցական աշխատավորներին, մանկավարժներին կատարելու Քրիստոսի խոսքը «յեղեք հեզ վորպես աղավնի և խորամանկ վորպես ոձ»: Նրանք այստեղ գրում են. «բապտիստների համայնքների կենտրոնական խորհրդի ակտիվ յեղբայրներին և քույրերին լուր է հասել, վոր տեղերում մի քանի յեղբայրներ և քույրեր վախում են իրենց յերեխաներին տալ խորհրդային դպրոցը, յելնելով այն սկզբունքից՝ թե խորհրդային դպրոցը անաստվածների, սրիկաների և սեռական սանձարձակության հրահրող ոջախ է»:

Մենք ավյալ հարցի բացատրությունը տալիս ենք մեր յեղբայր-

ներին և քույրերին, վոր խորհրդային դպրոցի դաստիարակության գործը դեռ այդ աստիճանի վատ չէ: Խորհրդային դպրոցական աշխատավորների 65–70 տոկոսը դեռ պահել են իրենց հավատը դեպի Հիսուս-Քրիստոսը և դեռ չեն ծնկել անաստվածության Վաալի առաջ: Դպրոցական աշխատավորների մեջ մենք ունենք յեղբայրներ հանուն քրիստոսի, տվյալ համայնքի ակտիվ անդամների և անդամ ավետարանի քարոզիչներ:

Ճիշտ է՝ հանդամանքների ուժի բերումով դպրոցական աշխատավորները փակվել և զգուշորեն թաղցրել են իրենց կրոնական համոզմունքները, բայց դաղտնի կերպով նրանք անցենկացնում դպրոցներում ավետարանի քաղաքականությունը:

Ահա դրա համար էլ մեր քրիստոնիաներին հարկավոր չի վախենալ խորհրդային դպրոցի քայքայիչ ազդեցությունից և ընդհակառակը մենք պետք է հավատացյալ յերեխաների միջոցով փոխադրենք ավետարանի քարոզը դպրոցի ներսը և աշխատենք ստեղծել այնտեղ հավատացյալ յերիտասարդների խմբակներ և բջիջներ: Այդ իմաստով մեր յեղբայրները և քույրերը այդպիսի փորձ արդեն արել են Ուկրաինայում, վորտեղ ստացվել է ամենալավագույն արդյունքը (ծիծաղ):

Զգիտեմ, վորքան է ճիշտ բապտիստական վիճակագրությունը, հաղիվ թե նա ճիշտ լինի: Բայց ընորոշ է նրանց դովասանքը յերկերեսանիների մասին «Հեգ վորպես աղավնի և խորամանկ վորպես ոձ»: Յերկերեսանիները, վորոնք մեր գործը համարելով ստարների գործ, տանելով դաղտնի պայքար, մեզ համար հանդես են գալիս վորպես վնասարարներ և այդպիսիներից մենք աստիճանաբար, բայց բավականին չափ արագ կերպով պետք է ազատվենք»:

Զափազանց շատ տարածված է «չդիմադրողի», տիպը մեղմ ինտելիգենտի, վոր չունի հեղափոխական կամք, վորը «խղճում է» կուլակին և տերտերին: Այսպիսի մարդիկ խորհրդային մարմինների իշխանության գործողություններին, միութենական գծին հավանություն են տալիս, քվեարկում են գծի համար, հաճախակի քվեարկում են անդամ անվերապահորեն և սրտով: Բայց յերբ գալիս է ժամանակը այդ գիծը կիրառելու, յերբ նրանք չվում են կենդանի մարդկանց հետ և գործնականում անհրաժեշտ է դառնում անցկացնելու դասակարգային գիծը, այստեղ սկսվում է «խղճահարությունը» և հեղափոխական գործից տակը քիչ բան է մնում:

Նրանք հաճախակի կողմնակի դիտողներն են: Յեթե կադրերի դաստիարակությունը, սոցիալիզմի համար մարտնչողների հարցը միայն կախված լիներ նրանցից, դա շատ վատ կլիներ: Բայց այդ միայն նրանցից կախված չէ: Դաստիարակում են պիոներները և մանկական ջոկատները և դաստիարակում են ուսուցչական կոլեկտիվները: Յեվ ահա այստեղ անհրաժեշտ է լինում վոչ բոլորից դուցե, բայց շատերից մոտակա ժամանակներում ազատվել: Նրանց ճնշող մեծամասնությունը կարող է ոգտագործվել, պայմանով, վոր վոչ կոլեկտիվը իր աշխատանքով և լուսաշխատավորների կոլեկտիվ ապահովի կուսակցության գիծը նրանց աշխատանքների մեջ: Այժմ, յերբ դասակարգային պայքարը մտնում է իր սուր ֆազի մեջ «անդիմադիրներին» և մյուսներին, վորոնք անվում են «ճահիճում», պետք է շուտով «ներս ծծել»: Մենք վորպես կազմակերպություն այդ բանում պետք է ոգնենք: Տվյալ եառպում դասակարգային պայքարի քողարկումը, քաղաքական տատանումների քողարկումը մեր շարքերում, մենք համարում ենք ամենակոպիտ աջ թեքման դրսևորում մեր աշխատանքների պրակտիկայում: Այժմ չբջադարձի ժամանակ մենք պարտավոր ենք հատկապես սրելու մեր պայքարը նրանց դեմ:

ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ, ՊԱՐԶՈՐՈՇ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԳԾԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՈՐ ՁԵՎԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեր լրջադույն բացերից մեկը—դա ինքնաքննադատության թույլ ծավալման բացն է: Սա ոպորտյունիստական հիմնական հատկանիշներից մեկն է: Բյուրոկրատները, խալտուրա տարքողները, ալելու ատողները վտանգավոր են այժմյան սուր չբջադարձում: Բյուրոկրատը, ցամաքած մանկավարժը, բծախնդիրը—չորացնում են յերեխաների և կոլեկտիվի կենդանի ձեռներեցությունը, տալով հրահանգներ, կարծում են վոր արդեն կատարված է այն և հաշվի յեն առնում վորպես կատարված, չեն ստուգում նրան և քննադատաբար չեն վերաբերվում իրենք իրենց:

Խալտուրշչիկը աշխատանքի վորակը պատրաստում է քանակից առանց խորապես մտածելու տվյալ ահրցի մասին: Քանակով շատ, վորակով քիչ: Զկարենալ ընտրելու հիմնական ողակը, չկարենալ կենտրոնացնել ուշադրությունը նրա վրա: Կարծում ես գործի մարդ է, շատ վազվզում է, պարծենում է, կարծում ես, վոր մարդը «այրվում է»: Բայց իսկականում, յեթե արդյունքները հաշվի առնենք, նա խալտուրշչիկ է: Ալիլու ատողի համար ամեն ինչ լավ է, նա դժվարություններ չգիտի և նրա համար էլ նրա դեմ չի մղում պայքար: Այս տիպերի՝ բյուրոկրատների, խալտուրշչիկների, ալելու ատողների հետ սոցիալիստական վերակառուցման խնդիրը չես լուծի, ահա թե ինչու

մենք պարտավոր ենք հիմա սրելու մեր միութենական կազմակերպությունների ուշադրությունը վճռական ինքնաքննադատության անցկացման վրա:

Շատ կազմակերպությունների աշխատանքների մեջ պարզորոշ դասակարգային գծի բացակայությունը ապացուցում են մի շարք յերևույթներ: Սա, առաջին հերթին թույլ պայքարն է վնասարարների դեմ, կուլակ ուսուցչի դեմ (մեզանում քիչ չեն այնպիսի ուսուցիչները, վորոնք հող ունեն և շահագործում են բատրակներին): Այդպիսինները ինքնըստինքյան հասկանալի յե, վոր տեղ չպիտի ունենան մեր դպրոցներում և միության շարքերում, սա այն դասակարգային թշնամին է, վորի վոչնչացման համար մենք դիմ ենք վերցնում: Յերկրորդը, դա չկարենալն է, կամ չհասկանալն է հենվելու միության առաջավոր տարրերի, մասնավորապես յերիտասարդության վրա: Այդ յերևում է Ուժեվկու որինակից, յերբ յերիտասարդությունը գնում է դպրոցից նրա համար, վոր հները թունավորում են յերիտասարդներին, իսկ միութենական կազմակերպությունները դրա վրա ուշադրություն չեն դարձնում: Այն կազմակերպությունները, վորոնք կարողանում են ոգտագործել միության անդամների առաջավոր ուժերին, կոմունիստներին, կոմյերիտականներին, քաղլուսաչխատավորներին, հեղափոխական ինտելիգենցիային, խրճիթվարին, դրադարանապետին, իհարկե նման կազմակերպությունը գիմ ունի:

Յերրորդը՝ դա դասակարգային դաստիարակության բացն է, վորպիսի խնդիրը միութենական մարմինները մեր հիմնական միութենական մասսային չեն տալիս և չորրորդ դա աշխատանքների կոնտակտ (համաձայնեցումը) ստեղծելու բացակայությունն է, վոր մեր մարմինները չեն կարողանում մյուս կազմակերպությունների հետ ստեղծել կուսակցության ղեկավարության տակ: Մենք շատ հաճախ ստանում ենք բողոքներ, վոր ուսուցչին վիրավորում են: Գանգատվում են Մոսկվա, բայց չկա կարողություն տեղում, տեղական հասարակայնության ուժերով մղել պայքար: Պայքարը պարզորոշ դասակարգային գծի համար պիտի ընդմիշտ մնա վորպես հիմնական խնդիր: Միության կազմակերպչական պրակտիկայում ոպորտունիզմը կայանում է նրա մեջ, վոր մարդիկ չգիտեն, թե վոր ողակից բռնեն, վոր չմոռացվեն այնպիսի ողակները, վորպիսիք են կոլխոզ և սովխոզ շինարարությունները: Մեզանից շատ շատերը, մինչև իսկ մարզային և կենտրոնական վարչությունները համարյա թե չեն զբաղվում կոլեկտիվացման և սովխոզ շինարարության խնդիրներով:

Ոպորտունիզմ է նաև աշխատանքի նոր ձևերի արհամարումը, նրանց մասին խոսում են, բայց գործնականում չեն կիրառում: Յես նկատի ունեմ այնպիսի մեթոդներ, վորպիսիք են մասսայական կամավորությունը, սոցմրցումը և այլն:

Գետք է տեղիմների աշխատանքները և վայրերը տեղափոխել խոշոր կոլխոզները և սովխոզները նրա համար, վորպեսզի լուսաչխատավորական մասսային կարելի լինի կապել կոլխոզ և սովխոզ շինարարության հետ: Այս բոլորը կատարվում է շատ դանդաղ և դժվարաշարժ: Առանց մեր աշխատանքների և միութենական աշխատանքների վերակառուցման մենք չենք կարող լուծել մեր առաջ դրված խնդիրները: Դրա համար եվ պայքարը ոպորտունիստական պրակտիկայի դեմ և միության կազմակերպչական աշխատանքներում մնում է դարձյալ վորպես կարևոր խնդիրներից մեկը:

Վերջինը, վոր յես կուզեյի ընդգծել, դեպի կոլխոզ շինարարությունը դոյություն ունեցող անուշադրությունն է, տվյալ շրջանի կարևոր պրոբլեմը—կոլխոզներում և կոլխոզների շուրջ տարվող դասակարգային պայքարի անցկացման անկարողությունն է, ուշադրության բացակայությունն է, կամ պարզ ասած կոլխոզների աշխատանքի կազմակերպման հարցերի արհամարումը, վորով նպաստում են կոլխոզներում հավասարության տենդենցների առաջ գալուն:

Յեթե ուսուցչուհին ձգում է դպրոցի դասերը և գնում կով կթելու—դա վորպես թե կարևոր չե, յեթե չեն ոգտագործվում մասնագետների աշխատանքը—դա վոչինչ է և այլն: Կոլխոզների կուլտուրակենցաղային հարցերի մասին միայն խոսում են, բայց կենցաղի վերափոխման համար վոչ մի ակտիվ քայլ չի արվում: Մինչդեռ կոլխոզներում առաջ են գալիս կուլտուրական հիմնարկների նոր ձևեր— մի քանի կոլխոզներ վեր են ածվում կոլխոզդպրոցների, իսկ նրանց կողքին շարված տեղիմները դրա մասին վոչինչ չգիտեն: Այժմ, յերբ կոլխոզշարժման պրոբլեմը պետք է դրավի մեր միության ուշադրության կենտրոնը, դեպի այդ պրոբլեմը ունեցած անուշադրությունը, վորպես դեպի հիմնական, սոցիալիստական հարձակման գլխավոր պրոբլեմը, հանդիսանում է աջ ոպորտունիզմի այն տարրերից մեկը, վորի դեմ ամեն կերպ պետք է սրենք մեր պայքարը: Յես պետք է ամենայն վճռականությամբ ընդգծեմ մեր միության առաջավոր ջոկատին ամեն տեսակ ոժանդակություն ցույց տալու անհրաժեշտության վրա, վորը աճում է քանակապես և վորակապես, վորը և տանում է ամեն տեսակի ֆիզիկական կորուստ կուլակի դեմ մղվող պայքարում:

ՀԱՅԿՈՄ ՏՊԱՐԱՆ
Գոս. Հանրագրադարան
Հայ-Սովետ
ՀՄ 220-57

Եթե մենք համեմատենք այն, թե ինչպես ուսուցիչը սկսել է հասկանալ դասակարգային պայքարը և ինչպես ելա նա յերեկ, մենք պետք է առանց վորյեվե կասկածի արձանագրենք մեծ առաջադիմություն նրա աշխատանքների մեջ, խոշոր հաջողություններ մեր շինարարության ֆրոնտում, սոցիալիստական մրցման, կուլտուրական արշավի և բանվորական մասսաների աշխատանքային ենտուզիազմի բարձրացման բնագավառներում: Բոլոր այս յերեվույթները վարակել են լուսաչխատավորների հիմնական մասսային, բայց յես մի անգամ ել պետք է ընդգծեմ, վոր մենք չունենք բավականաչափ կարողություն մոբիլիզացիայի յենթարկելու լուսաչխատավորական մասսայի ակտիվությունը: Այստեղից ել բղխում է ոպորտյունիզմի դեմ (պահպանողականության) պայքարելու անհրաժեշտությունը, այն հիմնական խնդիրները, վորոնց վրա յես կանգ առա վերեվում, միությենական կազմակերպությունների աշխատանքների պրակտիկայից յելնելով:

ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՊԱՅՔԱՐԻ ՖՐՈՆՏՈՒՄ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Սոցիալիստական կառուցողների կադրը պատրաստել հեղափոխական մեթոդներով

Կոլեկտիվացման և սովխոզ շինարարության ուժեղ թափը չափազանց սուր կերպով դնում են կադրերի հարցը: Ինչպես ենք մենք պատրաստում սոցիալիստական կառուցողների կադրերը գյուղում և ինչ մեթոդներով ենք պատրաստում—նոր թե հին: Հարկավոր չէ մոռանալ, վոր դա մեր միության գլխավոր խնդիրն է, վորովհետև կադրերի պատրաստումը՝ դա մեր արտադրությունն է:

Կարիք չկա ապացուցելու, վոր կադրերի պահանջը, վոր առաջադրում է մեզ կոլխոզշարժումը—խոշոր է: Կադրերի պահանջը՝ դա մեզնից ամեն մեկը դգում է տնտեսավարական մարմինների կողմից կատարվող ճնշումով, վորը արվում է ժողկրթական մարմինների վրա, վորոնց հետ մենք ամեն որ չվվում ենք:

Կադրերի պայքարի համար շարժվել են իրենք կոլխոզնիկ մասսաները և սովորողները: Աճում են և շատ արագ են աճում կոլխոզների և սովխոզների կուլտուրական հիմնարկների ցանցը, կազմակերպվում են կոլխոզային բանֆակներ—նոր տիպի դպրոցներ և այլն: Սովխոզների և կոլխոզների արտադրական բաժինները դրա համար տալիս են լավագույն նյութեր: Ցեվ խկապես, սովխոզների և կոլխոզների խոշոր

բազաների վրա, մենք այժմ սկսում ենք մոտենալ այն ագրոդպրոցներին և պոլիտեխնիկակ. դպրոցներին, վորոնց մասին այդքան շատ խոսում ենք: Ցեթե սկսվել է մասսաների շարժումը կադրերի պայքարի շուրջ, յեթե ստորին խավերում կա կենդանի և գեղեցիկ փորձ և աշխատանքների նոր ձևեր, դժբախտաբար պետք է արձանագրել, վոր ղեկավարող մարմինները միանգամայն հետ են մնացել մասսաների ստեղծագործ ձեռներեցությունից,—ղեկավարող մարմինները չեն կարողացել ձեռներեցություն հանդես բերել, չեն կարողացել ձեվակերպել և ուղղություն տալ:

Անկարելի յե չընդգծել այն դրական աշխատանքները, վորը կատարել են վերջին ժամանակներս Միջին Վոլգան, Ստորին Վոլգան, Հյուսիսային Կովկասը, Մոսկվան, Բելորուսիան, ինչպիսիք են՝ գյուղատնտեսության համար կադրեր պատրաստելու խնդիրը, մասսայական ագրո-արշավներ, վորոշ վայրերում անգրագետների լիակատար ընդգրկում և անգրագիտության, ագրոանգրագիտության վերացում և կուլտուրական աշխատանքներ տանելը և այլն:

Կուլտուրական աշխատավորները ձեռք բերելով ագրոպատրաստություն, իրենք վերապատրաստել են շատ հարյուր-հազարավոր գյուղացիական ակտիվներ:

Դժբախտաբար այդ տեղերում ժողովրդական կրթության մարմինների ղեկավարությունը սուր կերպով հետ է մնում: Հետ է մնում Լուսժողկոմատը: Որինակ ՌՍՖՍՀ-ի Լուսժողկոմը չկարողացավ մեր ներկա պլենումի համար պատրաստել նյութ՝ կուլտուրական հիմնարկների դերը գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդրում: Այս խնդրում անպատրաստ է յեղել նույնպես Բելոռուսիայի Լուսժողկոմատը: Մեր շրջանային և յերկրային կազմակերպությունների տված նյութերով դարձյալ կարելի յե յեզրակացնել, վոր ժողկրթության մարմինները դեռ արմատական տեմպով չեն դնում արմատական պրոբլեմների լուծումը, վորը դրել է մեր առաջ մեր կուսակցությունը:

Չի կարելի ասել, վոր այստեղ ևս չկան խոշոր նվաճումներ: Թերիչք կա: Ուղարկված են բրիգադաներ, ապարատներում տարված են մեծ աշխատանքներ, վերակազմվում են ծրագրերը, ուսման պլանները: Բայց այդ տեմպերը վոչ մի դեպքում չեն բավարարի մասսաների պահանջը, տնտեսավարների պահանջը և սոցիալիստական արշավի պահանջները:

Անհրաժեշտ է ել ավելի արագ վերակառուցել, հեղափոխականորեն, չպետք է վախենալ բեկումից:

Պետք է սրել դասագրքերի հարցը, կրթական հիմնարկների նոր

տիպերին համաձայն: Հետեվյալ պլենումում պետք է դնել մանկավարժական կադրերի պատրաստման մասին: Բեկումն ամենանվազ չափով վերաբերվել է մանկավարժական կադրերի վերապատրաստման, անցյալ տարի մենք ունեցել ենք հին տեմպերը և անգամ չենք կատարել այդ բնագավառում ԺԿՍ-ի դիրեկտիվները: Իսկ այժմ մանկավարժների վորակի հարցը մեզ մոտ այլ կերպ է դրված: Այստեղ անհրաժեշտ է ավելի շատ վճռական բեկում և այստեղ լուսաշխատավորները պարտավոր են կազմակերպել այնպիսի ուժեղ հարձակում և ճնշում, վորպիսին կազմակերպել են տնտեսավարները, վորպիսին կազմակերպել են արդյունաբերական միությունները արդյունաբերական և գյուղատնտեսական կադրերի պատրաստման գծով:

Ցեղրակացություն՝ մեր միությունը, վորը պարտավոր է մասնակցել ապարատի լավացման աշխատանքներին, նա չի կարողացել բավականաչափ կերպով ժողկրթության մարմինների յերեսները դարձնել դեպի կոլեկտիվացումը: Ցես առաջարկում եմ, վորպեսզի հետևյալ պլենումը նորից հարց դնի ժողկրթության կադրերի մասին նրա համար, վորպեսզի այն վորոշումների կապակցությամբ, վորը կընդունի մեր պլենումը, հետեվյալ պլենումում հնարավոր լինի ստուգել ժողլուսավորության մարմինների աշխատանքները:

Դիրեկտիվ մարմինները խնդիր են դրել ստուգման յենթարկել կադրերի պատրաստման գործը մարտական կերպով, դեկադներով (տասնորյանկերով), հնգորյակներով, ոպերատիվ ստուգման, ռազմական ձևով: Ուրիշ կերպ ել չի կարող: Ցեթե այժմս կադրերի պատրաստման գործը հանդիսանում է շինարարության վճռական պրոբլեմներից մեկը, պարզ է, վոր այդ աշխատանքը պետք է կազմակերպել ռազմական ձևով, պարզ է այդ աշխատանքների կատարումն ել պիտի ստուգվի ռազմական ձևով:

ԿՈՒԼՏ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ—ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԶԵՆՔԵՐՆ ԵՆ

Կուլտհիմնարկները պիտի դառնան գյուղի սոցիալիստական վերակառուցման զենքերը: Կուլտհիմնարկների վերը պետք է աշխուժացման յենթարկել, վորպես զանակարգային պայքարի զենքեր: Սրանումն է կայանում գյուղի լուսաշխատավորների հիմնական խնդիրներից մեկը: Լուսաշխատավորը և խրճիթվարը խաղալու յեն վճռական դեր կուլտհիմնարկների աշխատանքների մեջ:

Ցերբ մենք խոսում ենք ուսուցչի, խրճիթվարի, գրադարանապետի հասարակական աշխատանքների մասին, մենք նկատի ունենք ոգտագործել վոչ միայն ուսուցչին մեն-մենակ, վորպես հասարակական աշխատողի, մենք անհրաժեշտ ենք համարում վորպեսզի ուսուցիչը դուրս գա իր ամբողջ հիմնարկի և աշակերտության հետ, միացնելով իրենց շարքերի մեջ նաև ակտիվ գյուղացիներին և գյուղական ինտելիգենցիային:

Գյուղում միության արտադրական աշխատանքներին պետք է մաքսիմալ ուշադրություն դարձվի: Պետք է իր բարձրության վրա դրվի նաև արտադրակ. լուսավորությունը, վորը իրավմամբ սկսում է ծավալվել և հատուկ տեղ բռնել միության կուլտուրակ. աշխատանքների սիստեմում: Այս գծով գյուղում պետք է կատարվի ամենից առաջ, շրջադարձ միության կողմից յերեսներով դեպի արտադրությունը: Ընկերները մի շարք նամակների մեջ առաջադրում են խնդիրներ այն մասին, թե պրոցը պետք է դառնա կոլխոզի մի մասը, նա պետք է դառնա կոլխոզային դպրոց: Ցես կարծում եմ, վոր դպրոցը պետք է դառնա կոլխոզային միայն իր բովանդակությամբ, դպրոցը պետք է մաքսիմալ չափով իր աշխատանքները կապի կոլխոզաշխատանքների հետ: Միությունը իր աշխատանքներով այլ կերպ պետք է աշակցի: Բայց յես գանում են վոչ ճիշտ դպրոցների հանձնումը կոլխոզներին: Դպրոցը և խրճիթ-ընթերցարանը սրանք, խորհրդների կուլտ շտաբներն են:

Ցեղան այնպիսի տրամադրություններ, վոր համատարած կոլեկտիվացման շրջաններում խորհուրդները անելիք չունեն, վոր համատարածի շրջաններում պետք է վերացնել խորհուրդները: Այդ տրամադրություններին տրված է կտրուկ հակահարված: Խորհուրդները պետք է ուժեղացնեն իրենց ղեկավարող դերը կոլխոզշինարարության գործում: Խորհուրդները պետք է ունենան իրենց բյուջեն, և դպրոցները և խրճիթ-ընթերցարանները պետք է մնան պրոլետարական պետության հիմնական գաղափարական զենքերից մեկը: Քանի վոր գյուղում գոյություն կունենան խորհուրդները և քանի վոր այդ խորհրդները կունենան բյուջե, դպրոցներն անկասկած պետք է ապրեն պետական բյուջեյով: Սա իհարկե վոչ մի կերպ չի բացառում, վոր դպրոցը անհրաժեշտության դեպքում ոժանդակություն ստանա կոլխոզից: Լուսավորության միասնական ֆինանսական պլանի մեջ արտաբյուջետային միջոցները խաղում են շատ մեծ դեր: Ակներև է, վոր այդ արտաբյուջետային միջոցները պիտի ստացվեն և խոլխոզներից: Միանգամայն ակներև է նաև այն, վոր կոլխոզխորհրդները պետք է ուժեղացնեն իրենց դերը դպրոցների ղեկավարման և դպրոցական խորհրդների աշխատանքներում: Միանգամայն ակներև է նույնպես, վոր դպրո-

ցական աշխատավորը պետք է մնա վորպես Խորհրդային իշխանության աշխատակից։ Դպրոցական աշխատավորի իրավունքները և պարտականությունները, պետք է ռեկլամենտացիայի յենթարկել որենսդրության կարգով, հավաքական պայմանագրերի կարգով, այնպիսի կարգով, վորը տեղի ունի և այժմս։ Ցես չեմ տեսնում վորևէ պատճառ այդ ուղղությամբ վերանայելու գոյություն ունեցող կանոնադրությունը։ Ցես չեմ տեսնում նաև վոչ մի պատճառ այն բանի համար, վորպեսզի վատթարացվի ուսուցչի իրավատնտեսական դրությունը։ Ցես կարծում եմ, վոր Լենինի ավանդը՝ «հասցնել ուսուցչին այնպիսի բարձրության, վորպիսի բարձրության վրա նա չի կանգնած յեղել վոչ մի յերկրում», Լենինի այս լոզունգը մնում է ուղիղ և կոլեկտիվացման շրջանում և առավել ևս նա չի վերացվում համատարածի շրջաններից։

Ցես համոզված եմ, վոր առաջավոր կոլխոզնիկները այդ լոզունգը կպաշտպանեն։ Մի քանի խոսք սովխոզներում տարվող կուլտաշխատանքների մասին։ Ինձ թվում է, վոր այդ աշխատանքների թերագնահատում կա։ Սովխոզները, մասնավորապես խոշորները, սովխոզներ-գիգանտները, ունեն կուլտաշխատանքների համար բարենպաստ պայմաններ, վոր անհրաժեշտ է ոգտագործել։ Այնպիսի շրջաններում, ինչպիսին է Միջին Վոլգան, Կազակստանը, Ուրալը, Ստորին Վոլգան, վորտեղ կան ուժեղ սովխոզ-գիգանտներ, անհրաժեշտ է կոնկրետ կերպով մշակել խնդիրներ սովխոզներում տարվելիք կուլտ աշխատանքների մասին։

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Լուսաշխատավորը վորպես կոլտնտեսության կազմակերպիչ և կառուցող

Լուսաշխատավորները պետք է լինեն կոլեկտիվացման գաղափարի հրահրողները։ Այս գրությունը մեզ բոլորիս համար անվիճելի յե։ Աբդյոք լուսաշխատավորը հանդիսանում է կոլեկտիվացման գաղափարի հրահրողը։ բոլոր մեր տեղեկությունները արագ թափով հնանում են և արտացոլում են յերեկվա որը։

Այդ տեղեկությունները ցույց են տալիս, վոր այդ մասնակցությունը չի ընդունել համապատասխան զարգացում և դա հանդիսանում է ամենաթույլ բնագավառը գյուղական ուսուցչի հասարակական-քաղաքական աշխատանքների մեջ, թեև դրանց շարքում մենք

ունենք բազմաթիվ լուսաշխատավորների աշխատանքների գեղեցիկ որինակներ կոլխոզային շինարարության ֆրոնտում։

Ինչումն է կայանում այստեղ լուսաշխատավորի աշխատանքը։ Դա առաջին հերթին կոլխոզների կազմակերպման աշխատանքներն են, մի շարք տեղերում այդ աշխատանքները տվել են լիովին դրական արդյունքներ։

Աշխատանքի ձևերը, լուսաշխատավորների ձեռներեցությունը և ղեկավարությունը կոլխոզների կազմակերպման, չքավորության, կանանց և միջակների համար կոլեկտիվացման մասին ժողովներ, դեկուցումներ, և զրույցներ անցկացնելը, կոլխոզների կազմակերպչական ձեվակերպում տալը, ըստ վոլոստում այստեղ մասնակցելու յեն դպրոցները, խրճիթ-ընթերցարանները և այլն։ Կան անհատ ուսուցիչներ, վորոնք կազմակերպել են մի քանի կոլխոզներ։ Այս աշխատանքների մեջ հատկապես ընդգծվում է գյուղերիտ դպրոցների դերը։ Լուսաշխատավորների աշխատանքը կոլխոզների սպասարկման խնդրում չափազանց բազմազան է։ Հաշվի յեն առնված այդ աշխատանքների հեռավոր տեսակները՝ կոլխոզների կանոնադրության մշակում, կոլխոզների ղեկավար կազմի մեջ նախադահի, կամ վարչության անդամի պարտականությունները ստանձնելը և այլն, ներքին կարգապահության կանոնների մշակում, կոլխոզներում արտադրական խորհրդակցություններ անցկացնելը, հաշվապահության և հաշվետվության ձևերի դրումը, անդրագիտության վերացում, կոլխոզնիկների համար դասընթացքների կազմակերպում, աղրոանդրագիտության վերացում, խմբակների ղեկավարություն, զրույցներ անցկացնելը, մասսայական ընթերցանության կազմակերպում, կարմիր անկյունների և դրաստաբանների կազմակերպում, պատի թերթերի հրատարակում, նվիրված կոլեկտիվացման (սա նկատվում է դլխավորապես Ստորին Վոլգայում և Հյուսիսային Կովկասում), մանկապարտեզների և մանկահրապարակների կազմակերպում և ռադիո-սարքավորման կազմակերպում։

Արձանագրված են նաև այնպիսի աշխատանքներ, ինչպիսին են վորոշ շրջանի կոլխոզային շինարարության ծրագրումը։ որինակ՝ Վոլգսկի շրջանի 3 գյուղերում լուսաշխատավորները մշակել են ծրագիրը և գործնականում կիրառել համատարած կոլեկտիվացման անցնելը։ Լուսաշխատավորների վո՞ր մասն է մասնակցում այդ աշխատանքներին։ Մոտավորապես մեկ յերրորդը, ըստ Համլուսաշխի կենտկոմի մասնակի հետազոտման։ Վերջին ժամանակներս յերևան են յեկել

այնպիսի շրջաններ, որտեղ ուսուցչությունը ամբողջովին մասնակցություն է ունեցել կոլեկտիվացմանը: Մեր տվյալները ապացուցում են, որ որպես կանոն կոմունիստ-լուսաչխատավորների տոկոսը—որ մասնակցել են կոլխոզշինարարության, պակաս է քան կոմսոմոլների տոկոսը: Տոկոսային համեմատությամբ կոմսոմոլները շատ են մասնակցում քան անկուսակցականները: Ցեսթուլ եմ տալիս ինձ մի-տածելու, որ այդ տվյալները չեն կարող լինել բնորոշող, որովհետև այդ հետազոտումները համեմատաբար մասնակի բնույթ են կրել և տարածվել են միայն փոքր դրուպանների վրա: Կանայք տղամարդկանցից յետ չեն մնում: Շատերին թվում է, որ գյուղատնտեսությունը, կոլխոզշինարարությունը տղամարդու գործ է, բայց տվյալները ապացուցում են, որ մի քանի դեպքերում կանայք ավելի առաջ են գնացել: Ինչ է արգելք հանդիսանում լուսաչխատավորներին մտնելու կոլխոզ: Այստեղ միայն, մենշևիկյան մարմինների թույլ ղեկավարությունն չէ, այլ և այն, որ տեղերում կանոնավորված չէ և պարզ չէ կոլխոզ մտնող լուսաչխատավորների պարտականությունների և իրավունքների հարցը.

ԿՈԼԽՈԶՆԻԿ ՈՒՍՈՒՑՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Շատ հաճախ միենույն շրջանում կոլխոզները դանդաղ և միանգամայն տարբեր պայմաններ են դնում կոլխոզ ընդունվելու ինդեքսի նկատմամբ, հաճախակի վերցնելով չափից ավել մեծ տոկոս ուսուցչի աշխատավարձից: Այդ տոկոսը յերբեմն հասնում է մինչև ուսուցչի աշխատավարձի կեսին, կամ յերբեմն կուլ է տալիս ուսուցչի ամբողջ աշխատավարձը: Կոլխոզի անդամության հարցը պարզ չէ, մեկ ուսուցիչ գրում է «պատահում ես ընկերներիդ և նրանք հարցնում են—«Դու ղեկրոցը ձգո՞ւմ ես»—պատասխանում եմ—վոչ: «Ինչու դու կոլխոզում ես, չէ՞ որ կոլխոզնիկը չի կարող մնալ միության անդամ և կնշանակի չի՞ կարող լինել ուսուցիչ»: Շատ դեպքերում կոլխոզ ընդունվելու հանգամանքը ծանր կերպով է անդրադարձել ուսուցիչների իրավական և տնտեսական դրության վրա, արձակուրդների և այլի վերաբերյալ, որը խանգարում է ուսուցչին պատրաստվել աշխատանքների համար: Խանգարում է նրա որակի բարձրացմանը և դպրոցի արտադրողականությանն աշխատանքներին: Ցեղել են այնպիսի դեպքեր, յերբ աշխատանքի ժամանակ պահանջել են, որ ուսուցիչը ընդհատի պարապմունքները և գնա ծառերի կոճղերը հանի (Մոսկվայի շրջանում): Ցեղել են և այնպիսի դեպքեր կոլխոզներում, յերբ պահանջել են ուսուցչուհուց, որ նա թողնի պարապմունքները դպրոցում և գնա կովերի աղբը մաքրի: Գլենումը պետք է մտցնի այդ հարցերի մեջ որոշակի պարզություն:

Ինձ պարզ է այն դրությունը, որ ուսուցիչները, որոնք ունեն չընչազատական հող 100 տոկոսով պիտի մտնեն կոլխոզներ: Սա ՀԱՄԿՍ-ի որոշումն է բոլոր միությունների անդամների վերաբերյալ, որոնք ունեն չնչազատական հող: Ինձ համար պարզ է նաև այն, որ լուսաչխատավորները 100 տոկոսով պետք է մասնակցեն կոլխոզների կուլտուրական և ագրիկուլտուր աշխատանքներին, բայց ուսուցչի կոլխոզնիկ յինելու հարցը, որը չունի չնչազատական հող, պետք է վերանայել լրացուցիչ կերպով: Միատեսակ չեն մոտենում միությենական մարմինները և կոլխոզնիկներն ուսուցչի կոլխոզներում կատարելիք ֆիզիկական աշխատանքներին—որպեսզի պարզել ուսուցչի պարտականությունները կոլխոզներում, պետք է պարզել կոլխոզների աշխատանքի կազմակերպման հիմնական սկզբունքները: Խոսելով կոլխոզներում աշխատանքի կազմակերպման մասին, մենք հեռանկարում նկատի չունենք, բոլորովին մեռած գյուղացիական համայնքների նման մի բան, մենք դիտ ենք վերցնում սոցիալիստական ֆաբրիկայի աշխատանքների սոցիալիստական կազմակերպումը, աշխատանքի բաշխման հետ, ըստ մասնագիտության, գործի պատասխանատվության, որակավորման և այլի հետ: Ցեսթուլ, չդիտեմ այնպիսի որինակ, որ մի որևէ ֆաբրիկայի բանվորներ պահանջեին, թե ուսուցիչը միայն այն ժամանակ կարող է սովորեցնել մեր յերեխաներին, յեթե նա ավելի ֆաբրիկայի կամ գործարանի բակը և կամ կանգնի դագդահի մոտ: Այդպիսի ձայն առաջավոր արդյունաբերական բանվորներից մենք չենք լսել: Ցեսթուլ հասկանում եմ և գիտեմ, որ մանր, դաճաճային կոլխոզներում, որոնց մասին խոսում են ընկերները, Լենինգրադցիները, այն տեղերում չեն կարող առաջ գալ հավասարեցման տրամադրություններ. միանգամայն բացարելի յե և կարծեմ բնական է, որ այդ դաճաճային կոլխոզներն առաջադրում են պահանջներ այն մասին, որ կոլխոզային չինարարությանը մասնակցում են միայն նրանք, որոնք իրենք անձամբ վարում են կոլխոզի հողերը և խնամում կովին, բայց մենք պաշտպան չենք և կողմնակից չենք դաճաճ կոլխոզներին: Մենք բռնում ենք դաճաճ կոլխոզի ճամբից դեպի խոշոր կոլխոզը՝ շրջանային մասշտաբով և ավելի մեծ: Այդ խոշոր կոլխոզում կլինի և չի կարող չլինել աշխատանքի բաշխում, այդ խոշոր կոլխոզին հարկավոր չէ ուսուցչի կամ խրճիթվարի լրացուցիչ սեվ աշխատանքը, ընդհակառակը մեքենաները կազատեն ավելորդ աշխատողներ: Խոշոր կոլխոզի համար կպահանջվի ագրոտեխնիկ, դաշտաձեռքեր:

վոր, անասնարուծ, այգեպան, բժիշկ, կուլտաշխատավոր, խոշոր կոլխոզը բարձր կղնահատի ուսուցչի աշխատանքը, կոլխոզնիկի յերեխայի ճիշտ դաստիարակություն տվողին: Ցես կարծում եմ, վոր խոշոր կոլխոզներում միանդամայն կվերանա այն անուշադիր վերաբերմունքը դեպի ուսուցչուհու աշխատանքը, նաև այն վերաբերմունքը, յերբ ուսուցչուհուն հարկադրում են ձգելու դպրոցում աշխատանքները և դնալու կովերը խնամելու:

Բայց նշանակում է այդ, վոր ուսուցիչը պետք է խուսափի ֆիզիկական աշխատանքից: Ցես կարծում եմ, վոր վոչ: Ցեվ մենք վորքան շատ առաջադիմություն ունենանք դպրոցի ագրոնոմիզացիայի և պոլիտեխնիզացիայի գործում, վորքան մենք արագ և հաջող կերպով կարողանանք ջնջել մտավոր և ֆիզիկական աշխատանքների միջի տարբերությունը, այնքան լավ կլինի: Ցեթե դպրոցի ուսուցիչը, վոր աշխատում է կոլխոզի սահմանում, աշակերտներին գլխավորելով դուրս գա կոլխոզի դաշտը, դա շատ լավ կլինի: Մեզ հարկավոր է այնպիսի ուսուցիչ, վորը դպրոցի գործնական աշխատանքներով կարողանա ոգնել՝ վերացնելու մտավոր և ֆիզիկական աշխատանքների սահմանները: Սպիտակաձեռք ուսուցիչը կոլխոզներին հարկավոր չէ: Բայց կլիներ միաժամանակ վոչ նպատակահարմար, հանցագործություն, կադրերի բացակայության ժամանակ ուսուցչին կոլխոզում ոգտագործել վորպես սեվագործ ուժ: Կրկնում եմ, կադրերի հսկայական պակասության ժամանակ, յերբ կոլխոզներում կուլտ աշխատանքների մասին վոչինչ չի արված, յես բոլորովին կողմնակից չեմ այնպիսի նեղ ինտելիգենտության, յերբ մարդը վախում է ասելու, սո՛ւր, բայց ճիշտ խոսք: Ցես չգիտեմ ինչու միությենական կազմակերպությունը պիտի հրաժարվի հետամնաց գյուղացու նախապաշարումների դեմ պայքարելուց: Ինչու նա վորոշելով ուսուցչի իրավունքները և աշխատանքները կոլխոզներում, յելակետ պիտի ունենա հետամնաց գյուղացու հասկացողությունը և վոչ առաջավոր գյուղացու: Ցես կարծում եմ, վոր մենք ամեն մի նախապաշարման պիտի տանք արժանի հակահարված:

Այն լոզունգը, վորպեսզի ուսուցչին դնել ցանկալի բարձրության վրա, այդ լոզունգը չի վերանում և յես համոզված եմ, վոր կոլխոզշարժման ղեկավարող կազմակերպությունները մեզ կոգնեն կիրառելու Լենինյան ավանդները ժողովրդական ուսուցչի մասին ասված: Մեզանում դպրոցը պետական է, խորհրդային: Ուսուցչի դրությունը դպրոցում կանոնավորվում է աշխատանքային որենսդրությամբ: Ցես հակառակ եմ, վոր վորոշում ընդունվի աշխատանքային կոդեկսը փոփոխելու ուսուցչության նկատմամբ: Ցես կողմնակից եմ վորպեսզի մեր

տեղկոմներն ակտիվ կերպով մասնակցեն ուսուցիչների աշխատանքները նպատակահարմար ձևով դասավորելուն, վոր տեղկոմները, կոլխոզների վարչությունների հետ մշակեն ծրագիր, ինչ է անհրաժեշտ անել և ինչպես անել—վոր կոլխոզի աշխատանքներում ուսուցիչը ստանա տեղկոմից ոժանդակություն: Պլենումում, յերևի պիտի ստեղծել հատուկ հանձնաժողով կոլխոզկենտրոնի, Լուսժողկոմների և Լուսաշխի կենտկոմի աշխատակիցների, կոլխոզնիկ լուսաշխատավորների մասնակցությամբ, վորն ուշադիր կերպով կնայի և կքննի հարցն այն մասին, թե այժմս ինչ ոգնություն է հարկավոր տալ կոլխոզներին, ուսուցիչների, խրճիթվարների, գրադարանապետների և մյուս լուսաշխատավորների կողմից: Հանձնաժողովը մշակելու յե կոնկրետ ցուցմունքներ այդ բնագավառում և միաժամանակ նայելու յե ուսուցիչների իրավատնտեսական դրության հարցերը կոլխոզներում, հաշվի առնելով և ճշգրտելով տեղերի պրակտիկան: Մենք պետք է հիշենք, վոր ուսուցչության տնտեսական և կուլտուր կենցաղային կարիքների սպասարկումը, միությենական ամենակարևոր խնդիրներից մեկն է, յես կարծում եմ, վոր մենք պլենումի անունից պետք է մոբիլիզացիայի յենթարկենք մեր ամբողջ լուսաշխատավորների 800 հազարանոց բանակը կոլխոզներում աշխատանք տանելու համար: Ցես կարծում եմ, վոր պլենումը կարող է հանձնարարել այդ հանձնաժողովներին մշակելու պայմանագրի նախագիծ Կոլխոզկենտրոնի հետ—կոլխոզներում տարվելիք լուսաշխատավորների աշխատանքների մասին, վորպիսին կնքված է միության կենտկոմի և Գյուղանտառմիության Կենտկոմի հետ, վորպեսզի լուսաշխատավորների աշխատանքները ռացիոնալիզացիայի յենթարկվի, վորպեսզի իսկապես մեր լուսաշխատավորների ամբողջ բանակը կարողանա ավելի նպատակահարմար ձևով ոգտագործվել և վորքան հնարավոր է մեծ եֆեկտով:

ԻՐԱԳՈՐԾԵՆՔ «ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ» ԴԱՐՁՆԵԼՈՒ ԼՈԶՈՒՆԳԸ

Մի շարք կազմակերպություններ «Համատարած կոլեկտիվացման շրջանները՝ համատարած գրագիտության շրջաններ» լոզունգն են ընդունել: Այդ լոզունգը պիտի պաշտպանել: Ցես առաջարկում եմ այդ լոզունգը դարձնել մեր ամբողջ միության լոզունգը, վորպեսզի մեր ամբողջ բանակը սվինամարտի հանենք անգրագիտության վերացման համար: Միությունը պետք է ձեռք առնի բոլոր տեսակի միջոցները, վոր-

պեսզի առաջիկա ուսումնական տարվա սկզբից համատարած կոլեկտիվացման շրջաններում մացրվի ընդհանուր պարտադիր ուսում, հենվելով Բելոռուսիայի, Կենտրոնական Սեվհողյան շրջանի և մի շարք այլ շրջանների փորձերի վրա: Ցես այդ պահանջը համարում եմ միանգամայն իրագործելի: Գրադարանային արշավը պիտի հասցնենք մինչև կոլխոզները: ՌՍՖՍՀ-ի Լուսժողկոմատը, կարող է պատահել և ուրիշ լուսժողկոմատներ, կազմակերպել են պաշտոնական բրիգադաներ համատարած կոլեկտիվացման շրջաններն ուղարկելու համար: Այդ կուլտբրիգադները գնում են աշխատելու գյուղերում կես տարով, տարով, ուսումնասիրում են իրերի դրությունը, ոգնում են և ցույց են տալիս թե ինչպես պիտի կարգավորել աշխատանքները և այլն: Այսպիսով, յեթե մենք ցանկանում ենք «համատարած կոլեկտիվացման շրջանները—համատարած գրագիտության շրջանների» վերածել, մեզ անհրաժեշտ է մեր մի քանի կազմակերպություններին ոգնել և մոբիլիզացիայի յենթարկել համատարած կոլեկտիվացման շրջանների համար լավագույն, ավելի կայուն, քաղաքի լուսաշխատավորներից մեկ կամ յերկու հազար մարդ: Կոլխոզային ուժեղ շարժման տեմպերին մենք պիտի պատասխանենք կուլտուրական հեղափոխության մարտական տեմպերով: Պետք է հաղթել և ջնջել գյուղի իդիոտիզմը, վորը ժառանգություն է մնացել հին կարգերից—աշխատավորության ստրկացման և բռնության կարգերից: Հանրայնացված գյուղի սոցքաղաքական խնդիրները դեռ սուր, շատ սուր են ցցվում մեր առաջ: Գյուղի կենցաղի վերակառուցման հարցն անհրաժեշտ է յենթարկել քննության մեր բոլոր կազմակերպություններում: Այս հարցի կարևոր լինելու հանգամանքը մեզ պարտավորեցնում է, վոր նա քննության առնվի մեր առաջիկա պլենումներից մեկում: Հասել է ժամանակը, յերբ գյուղի համար պիտի ստեղծել կուլտուրական հնգամյակ, վորպեսզի միացվի բոլոր ջանքերը, լուծելու գյուղի կուլթուրական հերթական խնդիրները: Առկա բոլոր տեսակի մարդկային և նյութական բեռուրները պետք է դործադրել ավելի նպատակահարմար ձևով: Պետք է ամենամեծ չափով կուլտաշխատանքների մեջ դրավել գրագետ մարդկանց լայն կադրեր, վորոնք կցանկանան և ընդունակ են անցկացնելու բանվոր դասակարգի դաղափարը: Ցես պետք է հենվեմ Կոլխոզկենտրոնի կուլբաժվար ընկ. Կարապետի հոդվածի վրա: Նա մատնանշում է թե ինչքան շատ մարդիկ են հարկավոր կոլխոզների համար: Նա պահանջում է ստեղծել կուլտուրայի տներ այնտեղ, վորտեղ կան ագրոկոլխոզներ, քալուսվարության կաբինետներ, սանիտարական լուսավորություն, եկսկուրսիոն բյուրո, շարժական կինոներ և այլն: Նա կարծում է, վոր կուլտհիմնարկների ամբողջ ցանցը պետք է միացված լինի համատարած կոլեկտիվացման շրջաններում կոմունիստական դաստիարակության մի կաթսայի մեջ: Համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլտ. աշխատանքների միացումը և հնարավոր չափով ավելի համակերպելու միտքը՝ լիովին ճիշտ է: Կուլտուրական շինարարության խնդիրները հսկայական են ագրարային շրջաններում: Յեթե Մոսկվայի շրջանում կուլտուրական աշխատանքների ծավալումն մեզանից բոլորիցս պահանջում է լարված աշխատանքներ, ապա Տաճիկստանում և Թուրքմենիստանում ինչպիսի մեծ, և անչափ ուժերի լարումն է պահանջվում այդ գործի համար: Կուլտուրական հեղափոխության խնդիրների իրագործումն այստեղ—պրոլետարական դիկտատուրայի յերկրում կարող է և կապահովվի բարենպաստ պայմանների ամբողջ հանրագումարով, և արդյունաբերական շրջանների բանվոր դասակարգի լայն ոգնությամբ:

Ագրարային շրջանների կուլտուրական շինարարությունը մեզ վրա դնում է հատուկ պարտականություն և ինչպես ամբողջ միության, նույնպես և լուսաշխատավորների դերը դառնում է այս գործում առանձնապես պատասխանատու: Ցես միանգամ էլ պետք է ընդգծեմ գյուղատնտեսության վերակառուցման գործում Համլուսաշխի Կենտկոմի և գյուղանտառ միության կենտկոմի մեջ ինքված պայմանագրի դերի մասին: Մենք կունենանք միացյալ պլենում գյուղանտառ միության Կենտկոմի հետ և ցես մտածում եմ, վոր այդպիսով մենք կկարողանանք ստուգելու մեր կատարած միասնական աշխատանքը—պայմանագրի կիրառումը:

ԳՅՈՒՂԻՆ ՀԱՐԿԱՎՈՐ Է ՍԻՍՏԵՄԱՏԻԿ ՑԵՎ, ՎՈՉ «ԿԱՄՊԱՆԻՈՆ ԲՆՈՒՅԹ ԿՐՈՂ» ՈԳԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ճարվեցին այնպիսի տարորինակ մարդիկ, վորոնք իրենց նամակների մեջ «Ուչիտելսկայա գազետային» գրել են, վոր արդեն հասել է ժամանակը, յերբ միությունական մարմինները և ժողովրդական լուսավորության մարմինները պիտի ի մի ձուլել, վոր խնդիրներն իբր թե, այնքան մեծ են, վոր միությանը վոչինչ չի մնում անելու: Սրանք տեսդերի նամակներն են, բայց նրանք արտացոլում են կենտրոնի մի քանի ընկերների կարծիքը: Դուք հավանորեն հիշում եք ընկ. Գեգեչկորու յեղույթը, վորը հետո ընդունեց իր սխալը: Լուսաշխատավորների հասարակայնության և կոլեկտիվ աշխատանքների կազմակերպում, կուլտուրական շինարարության խնդիրների լուծման փոխադարձ պաշտպանություն և ոգնություն հատկապես գյուղական աշխատանքներում—

սահա լայնածավալ ասպարեզ միության աշխատանքների համար։

Կենտրոնական Կոմիտեն նկատի ունի և մոբիլիզացիայի է յենթարկել 150 գիտական աշխատավորներ գարնանացանի կամպանիայի համար։ Այդ թիվը համարվեց անբավարար և արդեն հասցվել է մինչև 750 աշխատավորների։ Պլենումն այդ թիվը մի անգամ ել կոտուզի և դուցե կտա իր թիվը։ Գյուղի համար գիտական աշխատավորների համամիութենական առաջին մոբիլիզացիան է սա։

Ապա քաղաքից գյուղ մեկնող բրիգադները։ Մենք պետք է հարց դնենք այն մասին, որ քաղաքը գյուղին տա սիստեմատիկ և վոչ կամպանիոն բնույթ կրող ոգնություն։ Այստեղ միայն մոբիլիզացիայով և բրիգադներով չի կարելի սահմանափակվել։ Այստեղ պետք է դեր խաղան նաև գյուղի կազմակերպությունների աշխատանքների վերակառուցումը։ Պետք է աշխատանքները կարգավորել մյուս կազմակերպությունների հետ և պետք է փոխել գյուղական միութենական մարմինների կառուցվածքը։

Քաղաքի կազմակերպությունները պետք է իրենց առաջ դնեն խնդիր այն մասին, թե ինչպես ապահովել գյուղում պրոլետարիատի խնդիրների կիրառումը կուլտ. հիմնարկների վոզջ սիստեմի մեջ, որպեսզի հնարավոր լինի կուլտ. հիմնարկների աշխատանքները յերեսով դարձնել դեպի կոլեկտիվացումը։

Միության խնդիրն է, իր տոկուն մասնակցությամբ և ոգնությամբ ապահովել կուլտ հիմնարկների շրջադարձը այդ աշխատանքների մեջ։ Ցեվ, հավանորեն, տեղկոմների աշխատանքների մեջ, արտադրական հանձնաժողովների աշխատանքներում և սոցիալիստական մրցման պայմանագրերում պետք է մացնել կետեր այն մասին, թե ինչպես կուլտհիմնարկները յերեսներով պիտի դառնան դեպի կոլեկտիվացումը։

Հարկավոր է ստեղծել կենդանի թելեր քաղաքի կուլտհիմնարկների, գյուղի դպրոցի և խրճիթ-ընթերցարանի միջև։ Այստեղ դեր ունեն խաղալու պիոներները, դպրոցական բրիգադները, քաղաքի թանգարանները, Լուսաչիի տները և այլն։ Ահա մի քանի գծեր, որոնցով շրջադարձ պիտի կատարել դեպի կոլեկտիվացումը։ Գյուղական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում դրված պիտի լինի կոլխոզ և սովխոզ շինարարությունը։ Սովխոզներ, տրակտորային կայանները, խոշոր կոլխոզները, ագրիկուլտուրաններին այս նոր կենտրոնները՝ դառնալու են կուլտուրաների կենտրոններ։

Այս տեսանկյունից անմիջապես պիտի վերանայել միութենական

ցանցը, վերանայել տեղկոմների դասավորումը։ Այդ աշխատանքները կատարել արագ թափով, վերջացնելով մինչև գարնանացանը։

Գյուղական տեղկոմների ուշադրությունը պետք է ուժեղացվի տեղի կոլխոզ շինարարության պրոբլեմների վրա։ Այստեղ յես կուզեի համառոտակի թվել հիմնական պրոբլեմները։ Այս խնդրում յես նը-կատի ունեմ կոլխոզային աշխատանքների ծրագրումը և դպրոցի ու խրճիթ-ընթերցարանի աշխատանքը, կուլտհիմնարկների ու լուսաչխատավորի պայքարը կոլխոզների բարձր ձեվերի, հանրայնացած տնտեսություններ համար և տրակտորա-մեքենայական կայանների համար, գիգանտ կոլխոզներ կառուցելու համար։

Ցես գիտեմ, որ շատ արդյունաբերական կենտրոններում բանվորները սահմանել են անմիջական կապ տրակտորա-մեքենայական կայանների հետ։ Այստեղ մեր միության և արդյունաբերական առաջավոր բանվորների միջև պետք է ստեղծել կոնտակտ։

ՏԵՂԿՈՄՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՆԵԼ ՀԱՐՎԱԾԱՅԻՆԻՆ

Այնուհետև առաջ է գալիս կուլտ հիմնարկների դասակարգային ուղղության և որոշության խնդիրները, կոլխոզների ներսում տարվող դասակարգային պայքարը, չքավորական խմբակների մեջ տարվելիք աշխատանքները և նրանց կազմակերպումը, գյուղական դպրոցների կազմակերպումը ավելի բարձր արտադրական խոշոր կոլխոզների և սովխոզների բազայի վրա։ Աշխատանքի հետազոտման պրոբլեմը կոլխոզներում, աշխատանքի կազմակերպման նմանեցումը խոշոր սոցիալիստական գործարանների և ֆաբրիկների ձեվերին, աշխատանքի կազմակերպման կոմունիստական ձեվերը և գյուղական «հավասարեցման» տրամադրությունների դեմ մղվելիք պայքարը։ Մենք պետք է ավելի ուժեղացնենք մեր աշխատանքը լուսաչխատավորի իդեոլոգիական, ագրոտեխնիկական և մանկավարժական զինման վերաբերյալ։ Լուսաչխատավորները պետք է մասնակցություն ցույց տան բոլոր հիմնարկներին, լրագրերին, միութենական վոզջ մամուլին։ Այդ զինմանը ոգնելու համար մենք կազմակերպել ենք ռադիո լրագիր «կուլտուրական ֆրոնտում»։ Ուսուցչության զինմանը պիտի ոգնեն մանկավարժական ամսագրերի միությունը, «ԲՈՒՀ»-երի և «Վատուզ»-երի գիտական կազմակերպությունները։

Պետք է վերակառուցել միության կուլտ աշխատանքների սիստեման։ Կոլխոզային դասընթացքները, մասսայական եքսկուրսիաները դեպի որինակելի կոլխոզները և սովխոզները, ինտերնացիոնալ դաս-

տիարակությունը, այս բոլորը խնդիրներ են, որոնք կանգնած են միության առաջ։ Պետք է հասնել նրան, որպեսզի լուսաչխատավորները ակտիվ կերպով պայքարեն կենցաղային նախապաշարումների և կենցաղային ծուռ տրամադրությունների դեմ։ Վորոշ ընկերներ առաջադրում են մշակութական կանոնադրության 9-րդ կետի հարցը, կարծելով թե արդեն ժամանակ է այդ կետը վոչնչացնել։ Իհարկե այդ հարցի քննությունը ուշադիր կլինի, բայց ես կարծում եմ, որ խնդիրը կանոնադրության կետի մեջ չի, այլ նրա, որ կարողանալ ինքնագովել, պետք է այնպիսի աշխատանք տանել, որ դպրոցում հավատացյալ մարդիկ չլինեն։ Դասակարգային պայքարը չի կարելի փոխել ձեվականությամբ։ Մի մտածեք, որ դասակարգային պայքարը կարգավորվում է (պարագրաֆներով) կանոնադրության կետերով։ Տեղկոմը միության աշխատանքների մեջ գլխավոր ողակն է, պրոֆմշակութական հասարակայնության անմիջական կազմակերպիչը։ Պետք է այնպես անել, որ տեղկոմի և լուսաչխատավորի աշխատանքների միջև գոյություն ունեցող վիհը վոչնչացվի, տեղկոմը չի պարապում նրանով, ինչով զբաղվում են լուսաչխատավորները, տեղկոմը հաշվի չի առնում լուսաչխատավորների մասնակցությունը գյուղի կոլեկտիվացմանը և այդ հարցերով չի հետաքրքրվում։ Տեղկոմներին հավասարեցրեք հարվածայիններին, առաջադեմներին։ Պետք է յերեսներով դառնալ դեպի լուսաչխատավորը, դեպի կոլխոզնիկը, սովխոզնիկը, խրճիթվարը, կարողանալ հենվել գյուղի հիմնական ակտիվի վրա, կարողանալ ոգտագործել գյուղի նոր տեխնիկական ինտելիգենցիային, որոնց չի խմացել մինչ հեղափոխական Ռուսաստանը և որը այսոր դառնում է ավելի և ավելի նկատելի ֆակտոր մեր վերակառուցվող գյուղում։ Ցես նկատի ունեմ մեքենավարներին, տրակտորիստներին և բոլոր այն տեխնիկական ուժերին, որոնք այժմս յերևան են գալիս գյուղում։ Լուսաչխատավորների հասարակական աշխատանքների ռացիոնալիզացիայի մասին։ Տեղերից ուղղակի ազդակներ են գալիս։ Ընկերները գրում են. «Զգիտենք ո՞ւր է յելքը»։ Իսկապես մարդկանց անսահման տանջել են, ծանրաբեռնել։ Իհարկե պետք է աշխատել ուժերի վողջ լարվածությամբ։ Բայց չի կարելի մարդկանց հասցնել մինչ այն տեղ, որ նրանք դառնան խալտուրշչիկներ։ Մարդը զեկուցման համար չի պատրաստվել—ասում են զեկուցող։ Նա խառնաշփոթում է։ Լուսաչխատավորի բեռնվածության կարգավորման հարցը ժամանակ է դնել։ Ուժեղացնել աշխատանքներ պրոֆակտիվի հետ։ Հարց է ծագել նրա մասին, որ գավվարչությունները մեր աշխատանքների մեջ վոչ

վորպես առաջ մղիչներ, այլ միության ղեկավարության արգելակներ։ Կենտրոնական Սեվհողյան չրջանը լիկվիդացիայի յե յենթարկել Կուբսկի լուսախչի վարչությունը։ Գավվարչությունների լիկվիդացիայի վերաբերյալ յեղած կարծիքը դառնում է ավելի և ավելի համոզեցուցիչ։ Զգիտեմ ճիշտ է սա, թե չե, բայց կարծում եմ, որ դրա մասին հարց դնելը հարկավոր է, և յեթե նրանք արգելակ են միությունական աշխատանքներին, գավվարչությունները պետք է լիկվիդացիայի յենթարկել, յեթե առաջ մղիչներ են—պետք է պաշտպանել։

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՑԱՆՔԸ ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ՍՏՈՒԳՈՒՄՆ Է

Վաղջ միությունը հայտարարել մոբիլիզացիայի յենթարկված

Գարնանացանը կլինի միության վերակառուցման գլխավոր ստուգումն։ Դրա համար վերակառուցումը պետք է կատարվի արագ, վորոշումն։ Դրա համար վերակառուցումը պետք է կատարվի արագ, վորոշումն։ Գարնանացանի կամպանիայի բովհետև բայլշեվիկյան ցանքը մոտ է։ Գարնանացանի կամպանիայի բովհետև բայլշեվիկյան ցանքը մոտ է։ Նեկատմամբ կուսակցության առաջադրած խնդիրները, կապահովի հեռանգ վճռական սոցիալիստական արշավի արագ տեմպը, պետք է արագա վճռական սոցիալիստական արշավի արագ տեմպը, պետք է արագա վճռական սոցիալիստական արշավի արագ տեմպը, պետք է արագ մատաղ մատաղ անել կապիտալիզմի հիմքերը գյուղում, պայքարել կուլակի դեմ և սովխոզային չարժման ավելի բարձր աստիճանի բարձրացման դեմ և սովխոզային չարժման ավելի բարձր աստիճանի բարձրացման դեմ և լայնացման և կուլակին վորպես դասակարգ վերացնելու համար։ Ցանքսի մարտական ծրագիրը տրված է Ժողկոմխորհի կողմից։ Լուսաչխատավորների նկատմամբ այդ ծրագիրը ձեվակերպված է Համայն

նենք գրադարան-ընթերցարանի, դպրոցի և գրադարանի աշխատանքների մեջ։ Միաժամանակ այստեղ պետք է ընդգծել դեպի կուլտհիմնարկների աշխատանքները ունենալիք ավելի մեծ պատասխանատվության հարցը։ Գործարանի դիրեկտորը արձակվում է աշխատանքից, յեթե գործարանը բաց է թողնում բրակ ապրանք։ Յերբ վոր խրճիթ-ընթերցարանը կողպեքի տակ է և այնտեղ վոչինչ չի արվում, իսկ խրճիթվարն էլ վազվզում է վորպես «չանթահարված», յերբեմն անոգուտ կերպով լինում է ամեն տեղ, դրա վրա ուշադրություն չի դարձվում։ Մենք կուլտհիմնարկների վրա պետք է դնենք վորոշակի պարտավորություններ և պետք է սահմանենք պատասխանատվություն այդ խնդիրների կատարման համար։

Գարնանացանի կամպանիայի համար գորակոչված է ամբողջ խորհրդային և կուսակցական հասարակայնությունը։ Մեր պարտքն է կոլխոզների և խորհուրդների կողմից հրավիրված արտադրական խորհրդակցություններին մասնակցելը, շրջանային մասշտաբով միությունական կոնֆերանսներ կազմակերպելը, ապահովել ոգնությունը կոլխոզների համար և հենվելով գյուղատնտեսական բանվորների ոգնության վրա, կուսակցության և արհմիությունական կազմակերպությունների ղեկավարությամբ կոլխոզային ֆրոնտում կատարել լավացում։

Ցես կարծում եմ, մենք պետք է վողջ միությանը հայտարարենք մոբիլիզացիայի յենթարկված գարնանացանի կամպանիայի համար։ Միությունական ղեկավարող աշխատավորները պետք է դնան տեղերը գործնական ոգնություն ցույց տալու։ Անհրաժեշտ է մոբիլիզացիայի յենթարկել հրատարակչությունները, լրագրերը և մամուլը։ Պետք է անցկացնել քաղաքի լուսաշխատավորների մոբիլիզացիա։

ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԲԱՐՁՐ ՏԵՄՊԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵՄՊԵՐՈՎ.

Գարնանացանը պետք է լինի մեր Համամիությունական ազրոկոլխոզ արշավանքը։ Բոլոր աշխատանքները պետք է տանել մրցման մարտական ձևերով։ Ընկ. Ստալինը ասել է. «Մենք ամբողջ ժամանակ դնում ենք ինդուստրացման ուղիով—դեպի սոցիալիզմ, թողնելով մեր հետևում դարավոր «ռուսական» հետամնացությունը։ Մենք դառնում ենք մետաղային յերկիր, ավտոմոբիլիզացիայի յենթարկված յերկիր։ Ցեվ յերբ ԽՍՀՄ կնստեցնենք ավտոմոբիլի վրա, իսկ գյուղացուն տրակտորի վրա,—թող փորձեն մեզ հասնել հարգելի կապիտալիստները, վորոնք ազմկում են իրենց «քաղաքակրթությամբ»։ Մենք դեռ

կտեսնենք, թե վոր յերկիրը կարելի կլինի «վորոշել» հետամնաց և վորը առաջադեմ»։

Այսպես կլինի։ Բայց վորպեսզի դա լինի, մենք պետք է ամբողջ բայլշեվիկյան, պրոլետարական վճռականությամբ պայքարենք կուսակցության գլխավոր գծի համար, տանք խորտակիչ հարված բոլոր ոպորտյունիստներին և բուրժուա-լիբերալ տեսություններին։

Զարգացող գյուղի ուղիների տեսության խնդրում մենք պետք է ուժգին հարվածով խփենք «ինքնահոսի տեսությանը»։

«Վորպեսզի մանր բուրժուական գյուղացիությունը—ասել է ընկ. Ստալինը—դնա սոցիալիստական քաղաքի հետևվից, անհրաժեշտ է դարձյալ։ բացի մյուս ձևերից դիմել նաև խոշոր կոլեկտիվների սոցիալիստական անհատության և սովխոզների ձևերին, վորպես սոցիալիզմի բազաների, վոր կարելի լինի գյուղացիության հիմնական մասսան շարժել սոցիալիստական քաղաքի գլխավորությամբ»։

Անհրաժեշտ է լիկվիդացիայի յենթարկել կուլտուրական հետամնացությունը, վորը խանգարող արգելակ է հանդիսանում գյուղի վերակառուցմանը, վորի համար անհրաժեշտ են կուլտուրական հեղափոխության մարտական տեմպեր։ Բացի այդ, պետք է լարել բոլոր ուժերը, պետք է պատրաստել նոր մարդկանց, մասսաներին դինել մարքսիզմի, լենինիզմի գենքերով, վորպեսզի մարդկանց ուղեղները վարվի սոցիալիստական տրակտորով և կոմբայնով։ Պետք է ուսուցիչ—լուսաչխատավորին դնել ցանկալի բարձրության վրա։ Ցեթե ընկ. Լենինը դրա մասին ասել է ռազմական կոմունիզմի շրջանում, յեթե այն ժամանակ լուսաչխատավորների առաջ դրված են յեղել խոշոր խնդիրներ, այսոր արդեն յերբ մենք առաջ ենք շարժվել սոցիալիստական հասարակության կառուցման ավելի բարձր աստիճանի հասնելով, յերբ մենք կատարում ենք շատ մեծ շրջադարձ, յերբ այսոր լուսաչխատավորների վրա դրվում են հսկայական խնդիրներ, անասահմանորեն բարձրանում է լուսաչխատավորի դերը։

Մեր խնդիրն է լուսաչխատավորին դնել չտեսնված բարձրության վրա բոլոր կողմերով։ Զինել լուսաչխատավորին մարքսիզմով, լենինիզմով, բարձրացնել ամբողջ լուսաչխատավորական մասսայի ընդհանուր կուլտուրաքաղաքական և նրանց ազրոտեխնիկական գիտությունները, զինել պոլիտեխնիզմով, տանել պայքար լուսաչների մակարդակը, զինել պոլիտեխնիզմով, տանել պայքար լուսաչխատավորի գերի հետագա ուժեղացման համար, վորպես առաջավոր հասարակական աշխատավորի լավացնել նրա իրավատնտեսական դրությունը, ահա այն խնդիրները, վորոնք մեր միությունական մարմինները,

մինների համար մնում են վորպես վճռական նշանակություն ունեցող ֆակտորներ։ Կատարելով այդ, զինելով լուսաչխատավորներին, մենք աջակցում ենք իրագործելու ժամանակակից դարաշրջանի սոցիալիստական մեծ խնդիրը։ Այս աշխատանքում մեկ կողմից՝ կուսակցությունը, բանվոր դասակարգը, կոլխոզային ակտիվը։

Պետք է լուսաչխատավորին դնել չտեսնված բարձրության վրա, վորպեսզի նա կարողանա իր ամբողջ մասսայով ակտիվ մասնակցի սոցիալիստական հասարակության վերակառուցմանը։

ԴԱՌՆԱԼ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԿՈՄԲԱՏ

Մեր ինֆորմացիայի վորակը և բնույթը մենք արդեն հնարավորություն ունեցանք դրսևորելու։ Նա ֆլյուսաձև արտացոլում է մեր աշխատանքների «յերեկվան օրը»։ Լավացնելով ինֆորմացիան, մենք ամրացրինք կենդանի կապը տեղերի հետ, միաժամանակ ինֆորմացիայի բացերը մենք պետք է լրացնենք Կենտկոմի պլենումում, վորտեղ «տեղերը» ներկայացված են։ Համլուսաշխի պլենումի առաջնակարգ խնդիրներից մեկն է, տեղերի կենդանի և կոնկրետ փորձը ընդհանրացնել, քննադատորեն ուսումնասիրել այն և բոլոր ավյալների հիման վրա մշակել սկզբունքային կարգի հրահանգներ մեր ամբողջ միության համար։

Բայց միանգամայն ակներև և ճիշտ է այն, վոր մեր միության Կենտկոմի կողմից լուսաչխատավորների ղեկավարության մեջ բացակայել է դիֆերենցիալ ղեկավարությունը այնքան կարևոր խնդիրների բնագավառում, ինչպիսին են՝ անտառաշինության, անասնապահության, սեզոնիկների մեջ տարվելիք աշխատանքների և այլնի վերաբերյալ, վորպիսի բացը, արհմիութենական աշխատանքների նոր պայմաններում, պետք է վերացնել, վորի համեմատ պետք է և վերակառուցել ղեկավարող միութենական մարմինների աշխատանքների սիստեման։ Այս յերկու նախնական դիտողություններից հետո, յես կանգ կառնեմ չորս խնդիրների վրա։

1. Հիմնական մասնյակի մասին, վորը պետք է անցկացնի մեր միությունը.

2. «Ցերեսով դեպի արտադրություն» լոզունգի մասին։

3. Կոլխոզնիկ ուսուցչի մասին և

4. Ուսուցչի և լուսաչխատավորի դերի և անելիքների, նրա դրության և ՎԿՊ (բ) ներկա շրջանի քաղաքականության շրջադարձի մասին։

ԼՈՒՍԱՇԽԱՏԱՎՈՐԻՆ ԶԻՆԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԸ ԸՄԲՌՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ներկա ժամանակաշրջանում, յերբ կուսակցությունը, յերկրում կատարվող դասակարգային առաջընթացի հետևանքով իր քաղաքականության մեջ շրջադարձ է կատարում, այդ շրջադարձը կատարելու համար, պետք է միության բոլոր անդամներին զինել այդ հասկացողությամբ։

Զեկուցման և մամուլի փորձ նակության մեջ մենք արդեն շոշափեցինք շրջադարձային ժամանակաշրջանի հատկանիշները։ Զեկուցիս տեղական հատվածը նվիրված եր առանձին ռայոններին և այդ տեղերից յելույթ ունեցան ընկերները։ Ամեն մեկին պարզ է, վոր այսորվա ամենահրատապ խնդիրը հանդիսանում է կազմակերպված սոցիալիստական արշավի ուղիով, ծավալել խորհտնտեսային և կոլտնտեսային շինարարությունը, հասցնել այն ավելի բարձր աստիճանի, և կուլակությունը վոչնչացնելու վորպես դասակարգ։ Ընդվորում՝ շրջադարձ կատարել քաղաքականության մեջ չի նշանակում «մարում», այլ դասակարգային պայքարի վճռական սրումն է նշանակում։ Սրման նման փաստեր բացահայտ կերպով յերևան յեկան հացամթերման կամպանիայի ժամանակ և իրենց մեջ պարունակում եյին չահագործման անհանդուրժելիության բոլոր դծերը։ Կուլակությունը, Մոսկվայի տակ, հոչոտեց բատրակությանը, նա Միջին Վոլգայում թունավորել է գյուղական ջրհորները և այլն և այլն։

Հետևաբար, լուսաչխատավորներին հարկավոր է գիտենալ, թե հետագայում ինչպես կգարգանա դասակարգային պայքարը։ Ըստ նրա տենդենցի, հավանորեն նա պիտի ավելի սրվի։ Վորպեսզի լուսաչխատավորները կարողանան ոգնել կոմկուսակցությանը կատարելու նախատեսված շրջադարձը, պետք է հասկանալ, վոր դժվարին պայմաններում է հարկավոր աշխատել և խուսցնել միության շարքերը։ Կուսակցությունը հերթ է սահմանում յերեք գարնանացանի կամպանիայի ընթացքում համատարած կոլեկտիվացման յենթարկել գյուղատնտեսության հիմնական շրջանները, վորոնցից առաջինը հաշվում է ընթացիկ գարնանացանը։ Ընթացիք գարնանացանը դառնալու յե լուսաչխատավորների և նրանց արհմարմինների աշխատանքների վերակառուցման գլխավոր ստուգումն, յերբ լուսաչխատավորները կազմակերպված սոցիալիստական արշավի կռիվների մեջ, կմարտնչեն կուլակությանը վորպես դասակարգ վոչնչացնելու լոզունգի տակ։ Յեվ մենք վոչ թե տեզիսների, վոչ թե զեկուցումների և վոչ

ել կարիներներում չե, վոր պիտի տանք լուսաշխատավորների և նրանց միության քաղաքական և գործնական աշխատանքների հանրագումարը: Մենք հանրագումարը կտանք դասակարգային հակառակորդի կրակի տակ: Այս քաղաքական լուրջ ստուգումն կդրսևորի մեր կուլտ բանակայինների գաղափարական, հասարակա-կուլտուրական և ագրիկուլտուր ռազմունակության մակարդակը: Ցեսս ընդգծում եմ, վորպես անհրաժեշտություն, ՎԿՊ (բ) ղեկավարության ներքո բոլոր պրոլետարական ուժերի կոնտակտի խնդիրը: Կուսակցության ղեկավարությունը հանդիսանում և այն անհրաժեշտ պայմանը, վորի առկայության դեպքում և միությունը և լուսաշխատավորները կվերակառուցվեն ամենակարճ ժամանակամիջոցում անսահման մեծ եֆեկտով:

Ինչպես մեր ուժերը մենք համաձայնեցնենք արդյունաբերական պրոլետարիատի հետ և ինչպես ուժեղացնենք նրա ղեկավարող դերը:

Համաձայնեցնել կարելի յե և առաջին հերթին պետք է ստեղծել կապ քսանը հինգ հազար բանվորության հետ, վորոնք ուղարկվում են կոլխոզներում աշխատելու. յերկրորդ ստեղծել նման կապ նոր ագրոտեխնիկական պրոլետարական ինտելիգենցիայի հետ, վորոնց մտքին գաղափար չի ունեցել մինչ հեղափոխական Ռուսաստանը (տրակտորիստներ, մեքենավարներ և այլն) ապա ամրացնել յեղած կապը բատրակների միության հետ, հենվել գյուղում արդյունաբերական ձեռնարկումների վրա, ապահովել քաղաքի մաքսիմալ ոժանդակությունը գյուղին և վերջապես, խորհանտեսությունները և խոշոր կոլտնտեսությունները դարձնել մեր միությունական աշխատանքների ամուր բազա:

Կուսակցության կողմից առաջադրված խնդիրների լույսի տակ, այսպիսով մենք կավարտենք աշխատանքների վերակառուցումը մեր քաղաքական լուրջ քննության նախորյակին: Լուսաշխատավորները պետք է լինեն կուլտուրական և ագրիկուլտուր ձեռնարկումների ինիցիատորները, այդպես և հայտարարում Համկենտկոմը (բ):

Իսկ ի՞նչ է նշանակում լինել ինիցիատոր: Դա նշանակում է առաջին հերթին լինել կազմակերպող, վորովհետև ձեռներեցությունը պետք է կարողանալ կազմակերպչորեն ձեվակերպել: Պետք է կարողանալ նաև ռեալիզացիայի յենթարկել նրան: Մյուս բոլոր պարագաներում, ձեռներեցությունը կարող է ցամաքել, ծածկվել, վորպես վոչ կենսունակ, վոչ գործածական: Այստեղից անպայման ճիշտ է այն միտքը, վոր մեր ձեռներեցության ռեալիզացիայի ժամանակ, մեզ անհրաժեշտ է ընդհանուր ուղղություն վերցնել բատրակա-կոլխոզային ակտիվի ստեղծագործ կամքը:

Իրավացի յե, իհարկե, կոմսոմոլի կենտկոմի ներկայացուցիչը, վորը ասում է, գործնական աշխատանքներում ուղղություն վերցնել կոմսոմոլից, տանել նրանց հետ կուլտուր քաղաքական աշխատանքներ: Միությունը պետք է մասնավորապես իր ուշադրությունը կենտրոնացնի լուսաշխատավորների մեջ կատարվող քաղաքական շերտավորման պրոցեսների վրա, վորը մեր յերկրում դասակարգային պայքարի հատուկ ձեվով, անդրադառնում է միության վրա և դնում է միության վրա իր վողջ լայնությամբ ինքնազտման լոզունգը: Բայց յեթե միությունական կազմակերպություններում չկա վորոշակի հասկացողություն մանրվրի մասին, վորը նա պիտի անցկացնի, յեթե նա թույլ է լուծում քաղաքական խնդիրները, յեթե նա իր աշխատանքները չի լցնում քաղաքական բովանդակությամբ, նրա համար ինքնազտման լոզունգը անիրական դարձելի յե:

Պիտի հիշենք, վոր պրոլետարական հասարակայնության ճնշմամբ և կուսակցության ղեկավարության տակ, մենք կանչված ենք ոժանդակելու, վոր նախագծված չրջադարձը կատարվի մեր քաղաքականության մեջ: Ահա սրա մեջ է այժմ կայանում մեր առաջնակարգ պարտականությունը:

«ՅԵՐԵՍՈՎ ԴԵՊԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ»

Լուսաշխատավորները սոցիալիստական արշավը ամենից առաջ պետք է սկսեն իրենց արտադրական բազայի վրա, այսինքն գյուղական, իրճիթ-ընթերցարանի և մյուս կուլտուր-լուսավորական հիմնարկների աշխատանքների վրա, մասնակից դարձնելով բանվորներին, բատրակ-չքավորներին և կոլխոզային ակտիվին:

Մեր կուլտուր լուսավորական հիմնարկները հանդիսանում են կոմունիստական դաստիարակության և պրոպագանդայի պետական զենքերը: Այժմ, կոլխոզշարժման պրոլետարական ղեկավարության ամրացման հետ, կուլտ-հիմնարկների դերը ամեն կերպ պետք է չեչտել և ուժեղացնել:

Այժմ, քան յերբևե պետք է սուր կերպով դրվի, վոր կոմունիստական դաստիարակության և պրոպագանդայի գենքերը չժանգոտվեն, այլ լինեն լավ սրված: Ցեվ պետք է կարուկ, քան յերբևե, լուսաշխատավորների աշխատանքները թեքել դեպի նոր խնդիրները «յերեսով դեպի արտադրություն» լոզունգը:

Որերս լրացավ 1-ին համամիութենական ուսուցչական համագումարի հնգամյակը: Համագումարում կնքվեց պայմանագիր մեր միությունների հնգամյակը:

թյան և կոմսոմոլի միջև։ Շատ վաղ չէ, վոր յես նայում եմի այդ համագումարի բանաձևերից մեկը—ուսուցչության և կոմսոմոլի աշխատակցության մասին։

Սրա մեջ կա ուղիղ ձևակերպում— «խորհրդային յերիտասարդությունը դպրոցը հանդիսանում է նոր աճող սերնդի կոմունիստական վերամշակման և դաստիարակության պետական կարևորագույն գենքը»։

Յեվ ընդգծում է, վոր՝

«Նոր սերունդը իր հասարակական դաստիարակությունը ստանում է վոչ միայն դպրոցում, այլ և անմիջականորեն մասնակցելով հասարակական կյանքի բազմազան բնագավառներին, ընդվորում, այդ աշխատանքների գործնականը, վորը կազմակերպվում է կոմսոմոլի և պիոներ կազմակերպությունների կողմից, հանդիսանում է նոր սերնդին կոմունիզմի վոգով վերամշակելու պրոցեսի անհրաժեշտ մասը»։

Բանաձևի մեջ մանրամասնված է կոմսոմոլի և ուսուցչության աշխատանքը, նրանց համար վորոշվում է փոխադարձ դեկավարության բնկերը և վերջապես ասվում է «կազմակերպելով միասնական աշխատանք ընկերական աշխատակցության և համաձայնության հիմունքներով, ուսուցչությունը և կոմսոմոլը ամեն միջոց պետք է ձեռնարկեն, վոր աշխատանքի մեջ ժամանակի կորուստ, անարտադրողականություն չլինի, չլինի նաև անոգատակ բեռնվածություն,՝ ինչպես ուսուցչի, նույնպես կոմսոմոլի և պիոների, վորին հասնել հնարավոր է ավելի պլանաչափ, սիստեմատիկ, մտածված «միասնական աշխատանքով»։

Անցկացրած բանաձևը չեչտել է դպրոցի, խրճիթ-ընթերցարանի և բոլոր կուլտուրական հիմնարկների դերը յերիտասարդության կոմունիստական դաստիարակության գործում։ Իրավացի յեն այն ընկերները, վորոնք Համյուսաշխի Կենտկոմի պլենումում նորից և նորից ձայն են բարձրացնում միության համար հատուկ անհրաժեշտություն ներկայացնող արտադրական աշխատանքների մասին, կուլակության վերացումն վորպես դասակարգ, սովխոզ շինարարության և կոլխոզային շարժման փայլուն հաջողությունների ժամանակ։

Թող գիտության և պրոպագանդայի գենքը, վորպես դասակարգային պայքարի գենք չժանգոտի։ Բայց և այնպես ամեն մի գենք, ամեն դասը չի պահում իր պետքականությունը, որինակ՝ հին ձևի հրացանները իրենց տեղը կիջեցին ավտոմատ գնդացիրներին և գինեթային թնդանոթներին։

Դարաշրջանները իրենց բնույթի համեմատ փոփոխում են նաև ժողովրդական լուսավորության սիստեման։ Այդպես եմ ՖՍՀՄ-ը ֆրանսիական մեծ հեղափոխության որինակով, վորը փակեց հնագարյան համալսարանները նրա համար, վորպեսզի նոր ծագող դասակարգը—բուրժուազիան կարողանա ստեղծել իրեն համար արդյունաբերության, առևտրական և պոլիտեխնիկական դպրոցներ։ Մեր յերկրի բանվոր դասակարգը, վորը բացել է իր գոյության ստեղծագործ դարաշրջանը և բռնել է դյուղատնտեսության համայնացման ուղին, վորոնում և պահանջում է ժողովրդական լուսավորության սիստեմի մեջ արմատական բեկումն, մինչև իսկ այն սիստեմի մեջ, վորը ինքն է ստեղծել, բայց առանց լիակատար հաշվի առնելով լայն ինդուստրացման և դյուղատնտեսության համայնացրած սեկտորի չափերը։ Բեկման և շրջադարձի այսպիսի ժամանակաշրջանում, մենք լուսաշխատավորներս, մեծ զգոնությամբ պետք է ականջ դնենք մասսաների կենդանի ձեռներեցությանը և նայենք այն նոր ձևերին, վոր իր հետ բերում է հեղափոխական իրականությունը։

Մենք՞ դեռ շատ քիչ փորձ ունենք, վորոշակի դպրոցների տիպեր տալու համար, բայց մենք պետք է իր ժամանակին վորսանք, կազմակերպենք և ուղղություն տանք մասսաների միջից ծնված ձեռներեցությանը։ Զեկուցման մեջ դրվեց կուլտուրական հնգամյակի հարցը, դյուղի կուլտուրական հնգամյակի անհրաժեշտության մասին, այն նպատակով, վորպեսզի բատրակ-կոլխոզային ակտիվին և գյուղական ինտելիգենցիային միացնենք հիմնական հարվածային խնդիրների շուրջը, վորոնք կուլտուրական ֆրոնտում ծառացել են մեր դեմ։ Այդ խնդիրները չոչափեցին ընկ. Ուպորովը (Կոմսոմոլի Կենտկոմ) և մյուս մի դերները չոչափեցին ընկ. Ուպորովը (Կոմսոմոլի Կենտկոմ) և մյուս մի քանի ընկերներ։ Գյուղի սոցիալ-կենցաղային վերակառուցումը, յերևելով նախապարյարներից, վորոնք առաջ են յեկել սովխոզների և կոլխոզների շինարարությունից,—դեռևս այդ պրոբլեմը չատ քիչ է մշակված, վորը և պահանջում է խիստ շտապ լուծում։ Մենք դեռ թույլ ենք հաշվի առնում և չենք կարողանում դպրոցական գործի վերակառուցման համար ոգտագործել այն լայն հնարավորությունները, վորը տալիս է մեր ինդուստրացվող և կոլեկտիվացման յենթարկվող յերկիրը։ Գյուղի կուլտուրական հնգամյակը ըմբռնելու համար, արդեն առաջադրվում են նոր դրույթներ։ Շատ բարձրագույն տեխնիկական դպրոցներ անցնելով անընդհատ արտադրական պրակտիկայի հասկանում են այն, վորպես հին ձևի պրակտիկա և վոչ թե վորպես կրթության նոր սիստեմի բեկիզը արտադրական աշխատանքի հիմունքով։ Իհարկե, դպրոց ձեռնարկելը արտադրական աշխատանքի հիմունքով։ Իհարկե, դպրոց ձեռնարկելը արտադրական աշխատանքի հիմունքով է անցնում։ Նրանք ուսման համար կի ուղիղ ըմբռնումը նրանց կողքով է անցնում։ Նրանք ուսման համար թեբաղնահատում են գործարանային կահավորումը և լաբորատորիա-

ները իրենց բոլոր այն հարմարություններով, զորոնց դու չես պատահել Վտուգներում (տեխնիկական բարձրագույն դպրոցներում), իսկ գյուղը-սովխոզով, մեքենա-տրակտորային կայաններով և խոշոր կոլխոզով, հնարավորություն կընձեռնի դպրոցը ագրոնոմիզացիայի, պոլիտեխնի-զացիայի յենթարկելու: Դպրոցների վերակառուցման խնդիրը, «յերեսով դեպի արտադրություն» լոզունգով, հանդիսանում է կարեվորագույն և անհետաձգելի խնդիր:

Տարիֆ-տնտեսական խորհրդակցության ժամանակ, յես մատնանշեցի, որ տարիֆ-տնտեսական բաժինների վարիչների յելույթներում չխոսվեց ֆաբրիկա-վտուգների մասին: Մինչդեռ Դնեպրոչինում, ևս Բեժեցում հունվարի 1-ից կազմակերպված են ձեռնարկ-վտուգեր և դուրս է գալիս, որ մեզնում ուշադրությունը թուլացել է, կամ ավելի չուտ, որ նման ուշադրություն իսկի չի յել յեղել դեպի այդ նոր ձևերը, որոնք առաջադրում է մեր կյանքը: Մասսան դրսեվորում է յուրաքանչյուր ստեղծագործ ձեռներեցություն—մենք խուլ ենք, մենք վտանգի յենք մատնվում, բաց թողնելով կամ մոռանալով ամենագլխավորը:

Ժողովրդական կրթության սիստեմի վերակառուցման խնդրի անհետաձգելիության հանդեպ, յերկրի սոցիալիստական վերակառուցման դարաշրջանում, ողջ դպրոցական և կուլտուր-քաղաքական աշխատանքների բովանդակության վճռական լավացման խնդրի հանդեպ, որոնք տիրաբար պահանջում են դաստիարակության գործը անցկացնել սոցիալիստական շինարարության պահանջներին համեմատ, անհնարին է չընդգծել «յերեսով դեպի արտադրություն» մեր միության հիմնական լոզունգը յուր ամբողջ ուժով:

Գյուղում այդ լոզունգի գործնական կիրառումը սոցիալիստական մրցման ուղիով մեր միության կարեվորագույն հերթական խնդիրն է: Սոցիալիստական մրցման խնդրի ղեկավարությունը ամեն միությունական մարմնի առաջին պարտականությունն է:

ԼՈՒՍԱՇԽԱՏԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԵԼ «ՅԵՐԵՍՈՎ ԴԵՊԻ ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՈՒՄ» ԼՈԶՈՒՆԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք մեր աշխատանքներում, յելնելով կոլխոզի պահանջներից, պետք է հավասարվենք կոլխոզշարժման հեռանկարներին: Ուսուցչությունը մի յերրորդը ունի շնչապատկան հող: Կարծում եմ, որ մենք ուշացած դրինք լուսաշխատավորների շնչապատկան հողերի խնդիրը: Բայց նա դրված է և արդեն լուծված է այն իմաստով, որ լուսաշխատավորը, որը կապված է հողի հետ, պետք է մտնի կոլխոզ: Չլինելով կոլխոզում, նա այդ պատճառով չի եկ կարող հանդես գալ որպես կոլեկտիվացման ինիցիատոր և նրան յերեսով չես կարող դարձնել դեպի կոլխոզ: Իրերի բերումով, այդ ժամանակ լուսաշխատավորը դառնում բեակցիոն և չի ըմբռնում այն հակակուլակային ալիքը, որն անցնում է նրա կողքով, որպիսին գրավում է գյուղացիության չքավոր-միջակային մասսայի ուշադրությունը: Ոբյեկտիվորեն նա անցնում է պատակարգային թշնամու շարքերը:

Լուսաշխատավորի պրոբլեմը, որն ունի շնչապատկան հող, յուրջ պրոբլեմ է: Կոլխոզային շարժման կապակցությամբ ուսուցչին կարելի յե ավելի ամուր կապել հողի հետ, կոլեկտիվացման յենթարկել «հողի իշխանությունը» ուսուցչի վրա, դնելով ամեն մի լուսաշխատավորի (դրանց թվում նաև հող չունեցողներին) հացամշակող կոլխոզնիկի հետ միանման պայմաններում: Այսպիսով մի քանիսը շատ պարզ են հասկանում «լուսաշխատավորներ 100 տոկոսով դեպի կոլխոզ» լոզունգը: Բայց ուսուցչին կարելի յե ազատագրել այդ «հողի իշխանությունից» և մոտեցնել նրան ֆաբրիկա-գործարանային բանվորի դրության, տրամադրելով ուսուցիչին՝ դպրոցական, խրճիթ-ընթերցարանային, կուլտուր-քաղաքական աշխատանքների համար, որոշիչների սուր պահանջը զգում է մեր կուլտուրապես հետամնաց գյուղը: Վերջինը կլինի ամենաճիշտը: Համլուսաշխի Կենտկոմի պլենումի հանձնաժողովը, որը պիտի մշակի կոլխոզներում աշխատող լուսաշխատավորների իրավա-նյութական հարցը, յես համոզված եմ, նա կանգ կառնի այն պրոբլեմի վրա, թե ինչպես ուսուցչի վրայից վոչնչացնել «հողի իշխանությունը» և նրա դրությունը ձևակերպելով, մոտեցնել նրան ֆաբրիկա-գործարանային բանվորի դրության:

Մենք յելակետ ենք ունենում խոշոր և վոչ դաճաճային կոլխոզը: Մենք, բայլշևիկներ ենք, չոնքացիներ, յերբ խորտակվեց համաձնքը, այնքան սիրված նարոդնիկների կողմից: Վոտնահարված, առանց այն եկ համապատասխան բարձրության վրա չդրված ուսուցչին, ֆիզիկական ուժով մենք չպիտի կապենք դաճաճային կրթության հետ: Մենք գյուղին նայում ենք սոցիալիստական վերակառուցման սյուների ճանապարհով: Մենք ցանկանում ենք լուսաշխատավորին յերեսով դարձնել հատկապես դեպի հանրայնացված տնտեսության բարձրագույն ձևերը, որի մեջ և նրա աշխատանքը կազմակերպված լինի ֆաբրիկա-գործարանային սկզբունքներով և իհարկե պայքարը՝ հանրայնացված տնտեսության բարձրագույն ձևերի համար, կընթանա ավելի հաջող, քան լուսաշխատավորն ուղղակի յերեսով դառնա դեպի այն: Այդ տեսակետ-

տով կմասնակցի նաև կոլխոզում աշխատող լուսաշխատավորի իրավաբանական անդամության հարցի լուծմանը, որը չունի ընչազատական հող։ Կոլխոզային շարժման ընդհանուր պլանի մեջ, նրա մեծագույն հեռանկարների լեռքում ուսուցիչը կկարողանա լինել կոլեկտիվացման հրահրողը, կուլտուրապես և քաղաքականապես սպասարկելով նրան, աշխատելով նրա զարգացման վրա իրավաբանորեն, չլինելով պարտադիր կերպով կոլխոզի անդամ։ Բայց և չի կարելի լուսաշխատավորների համար առանձնակի լուծել անդամության հարցը, առանց լուծելու արհմիությունների անդամների մասնակցության հարցի ընդհանուր լուծումը, որոնք ապրում են գյուղում, բայց և կոլխոզային միավորումների մեջ չեն պարապում գյուղատնտեսությամբ։

Ցես դեմ եմ նրան, որպեսզի լուսաշխատավորների հանդեպ զործադրվեն հատուկ միջոցներ, կամ դրվեն նրանց վրա ինչ որ հատուկ պարտականություններ, միանդամայն տարբեր մյուս արհմիությունների անդամներից։ Ոչ մի բացառություն և ոչ մի արտոնություն։

Հենց դրա համար էլ մեր պլենումն այդ հարցը պիտի դնի ՀԱՄԿԿ-ի առաջ։ Բայց այդ հարցը պետք է մշակվի պլենումի կողմից, հաշվի առնելով տեղերի փորձը և կոլխոզշարժման ուղիները՝ պայմանով, որ լուսաշխատավորը մտնելով կոլխոզի մեջ, որպես անդամ, չընկնի իրավանյութական ծանր շրջանակների մեջ։

Միաժամանակ մենք բոլորս միասնական ֆրոնտով պիտի պնդենք լուսաշխատավորների կոլխոզային շարժման 100 տոկոսային մասնակցության վրա, համաձայն Համլուսաշխի Կենտկոմի պլենումի և Կոլխոզկենտրոնի միջև կնքվելիք պայմանագրի։ Մեր բոլոր ուժերը դարձնենք դեպի կոլխոզ շինարարության սպասարկումը։

ՀԱՍՑՆԵԼ ԶԵՂԱԾ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ

Ուսուցիչը մեզ մոտ դեռևս չի դրված այն մինչև որս չտեսնված բարձրության վրա, որի մասին ասել է ընկ. Լենինը։ Մենք, որպես արհմիություն, պարտավոր ենք այդ մասին հիշեցնենք և մենք ինքներս չմոռանանք հենց դրա մասին։ Միթե պարզ չէ, որ նոր հեռանկարների հետ, որը բացվում է կոլեկտիվացման յենթարկված գյուղի առաջ, նոր ձևով և հնչում լենինյան լոզունգը։ Գյուղական ուսուցչության իրավանյութական դրության բարելավումը չատ խոշոր խնդիր է և դեպի նա յեղած արհամարանքի դեմ պետք է պայքարել։ Իզուր չեր ՀԱՄԿԿ-ի պլենումի հայտարարությունը, որ նման արհամարական վերաբերմունքն ընդհանրապես դեպի բանվորի առորյա շահերի պաշտպանությունը—արհմիության անդամը միությենական աշխատանքի պրակտիկայում, դրսևորված աջ ոպորտյունիզմ է։

Բայց հասցնել ուսուցչին մինչև այժմս չեռնված բարձրության չի նշանակում լավացնել նրա միայն իրավատնտեսական դրությունը, ուսուցչին պետք է գաղափարապես դինել, որպեսզի նա կարողանա պատվով կատարելու կուսակցության և բանվոր դասակարգի կողմից նրա վրա դրված խնդիրները։ Ցեվ պետք է ուժեղացնել լուսաշխատավորի հասարակա-քաղաքական դերը, նրա հասարակա-քաղաքական կշիռը։ Լուսաշխատավորը կանի, յեթե նա աշխատի ոչ միայնակ, այլ ինչպես միությենական կոլեկտիվի անդամ, ոչ անհատաբար, այլ որպես գրպրոցի կամ խրճիթ-ընթերցարանի դեկավար, հենվելով իր արտադրական բազայի (կուլտհիմնարկի) վրա, կոոպերացման յենթարկելով պիոներությանը, կոմսոմոլիսաներին՝ հենվելով բատրակային, չքավորական և կոլխոզային մասսայի կուլտ ակտիվի վրա։ Արագորեն վերակառուցել արհմիությունների աշխատանքների սիստեման, դիտական ինստիտուտների սիստեման, դեկավարության սիստեման, որպեսզի լուսաշխատավորն իրեն առաջադրված խնդիրների բեալիզացիայի մեջ դդա կոնկրետ և ոչ թղթային կամ դեկլարատիվ ոգնություն։ ՀԱՄԿԿ-ն համաձայնեց մեր առաջարկության հետ հարվածայինների, առաջավոր կոլեկտիվների համամիությենական համագումար հրավիրելու խնդրում, որոնք ունեն սոցիալիզմի և կոլեկտիվացման աշխատանքներում ոեալ նվաճումներ։ Պատրաստվելով համագումարի համար, մենք հավաստիացնում ենք մեր մարմինները, սկսած Լուսժողկոմատից և մեր Կենտկոմից, վերջացնելով ստորին ցանցով, յերեսներով դեպի հարվածայինները և ակտիվիստները և սրանում կլինի մեր նախապատրաստական աշխատանքների հիմնական ոգակը։

Ոչ համաձայն չէ նրա հետ, որ գյուղացուն պետք է արագից փոխել տրակտորի վրա, տալ նրան կոմբայն, իսկ դա հնարավոր է միայն այն ժամանակ, յերբ կուլտուրայի բնագավառում, գյուղացուն կոպտորկի ոչ արհամարված, մոռված հետամնաց ուսուցիչը, այլ գաղափարապես կոմբայն-լուսաշխատավորը, որը գինված է Մարքս-լենինյան գենքով, գիտության և տեխնիկայի վերջին նվաճումներով։

Ոչ մի տեղ, ոչ մի յերկրում լուսաշխատավորի առաջ չի տարածվում այնպիսի հեռավորություն, այնպիսի լայնածավալ դաշտ, ինչպես մեր, որի համար էլ կանչվում է մեր մությունն անդամների ուշադիր հարյուր հազարանոց բանակը։ Մեր բանակը կանչվում է գյուղի սոցիալիստական վերակառուցման պայքարի համար։ «Հասնել և անցնել պատմական կարճ ժամանակաշրջանում [illegible] սոցիալիստական յերկրներին» լոզունգը կիրառելու համար։

«Ազգային գրադարան»
NL0218987

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

3/9]
44. 407
1950/110